Առաջին տարի № 22 18 Յուլիսի 1882

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԱՒԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՒՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագինն է հինգ ռուբլի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔԻ» խմբագրատանը և կենտրոնական Գրավաճառանոցում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ“.

Առանձին համարները 15 կ. Յայտարարութիւնների բաժին 2 կ.

Մեր լրագրին կարելի է ստորագրուել և 6 ամսով, ներկայ յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը 1883 թ. 6 ամսուայ բաժանորդագինն է 3 րուբլի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Կովկասեան Պ. Կառավարչապետի զեկուցումը: Ընդ. Ուսուցչական ժողովի կարգադրիչ Յանձնաժողովի կողմից: Նամակ խմբագրին: Նամակ Գանձակից: Նամակ խմբագրին: —ՏԱՃԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ: Նամակ Վաղագից: Նամակ Կ. Պոլսից: —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անգլիա: —ՖԵԼԻԵՏՈՆ: Հայ պաշտելական Հրատարակութիւնները: —ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ: —ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ: —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յայտնի է որ Կովկասի պ. կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովը նոյն իսկ մեր երկիրը ժամանելու օրից ճանապարհորդութիւնները է անում ազգաբնակութեան պէտքերին ծանօթանալու նպատակով և իւր հաշիւները և զեկուցումները ուղարկում է ներքին գործոց նախարարութիւնը: «Այդ հաշիւներից երևում է, ասում է «Ռուսկիե Վեդ.» լրագիրը, որ երկրագործութիւնը Կովկասում ամենաանմխիթար դրութեան մէջ է, քանի որ ամենուրեք մշակներ են պակասում և երկրագործութեան ոչ մի կանոնաւոր եղանակ չ՝ կայ: Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով տէրութիւնը կովկասեան վարչութիւնից պահանջել է աւելի ճիշդ և մանրամասն տեղեկութիւններ այն խնդրի մասին, թէ արդեօք ինչպէս են բաժանուած հողերը Ռուսաստանից գաղթածների մէջ և հողի ինչ քանակութիւն է պատկանում նոցա: Այնուհետև, կարծում են, որ ներքին գործոց նախարարութիւնը եկող տարի ձեռնամուխ կ՝ լինի Կովկասում այն վերանորոգութիւնները մտցնելու, որոնք համապատասխան են ներկայիս պահանջներին»:

* * *

Ընդհանուր Ուսուցչական ժողովի Կարգադրիչ Մասնաժողովը խնդրում է մեզ տալ հետևեալը.

Կարգադրիչ Յանձնաժողովը այսու պատիւ ունի յայտնել ի գիտութիւն այն ուսուցիչների, որոնք ցանկութիւն ունեն մասնակցելու ընդհանուր Ուսուցչական ժողովի պարապմանց, որ յիշեալ ժողովի նիստերը սկսուելու են Օգոստոսի 20-ին: Յանկալի էր, որ մինչ նոյն ամսի 15-ը բոլորեքեան ներկայ լինէին նախապատրաստական ընտրութեանց համար:

Յանձնաժողովը պատիւ ունի նոյնպէս յիշեցնել, որ Ուսուցչական ժողովի մէջ, որոշուած նպատակին համապատշաճ որ և է խնդրի վերաբերութեամբ, խօսել կամ կարդալ ցանկացողը պարտաւոր է ուղարկել իւր զրուածը կամ բերանացի խօսելիքի ամփոփ բովանդակութիւնը անշուշտ մինչև յառաջիկայ Օգոստոսի 1-ը, որպէս զի Յանձնաժողովը կարող լինի ժամանակին իւր բոլոր կարգադրութիւնները վերջացրած ունենալ:

Ընդհանուր Ուսուցչական ժողովի նախապատրաստութիւնները հոգացող կարգադրիչ Յանձնաժողովը այսու պատիւ ունի յայտնել ի գիտութիւն, որ ցօգուտ Ընդհանուր Ուսուցչական ժողովի մեծ. պ. պ. Աբեղ. Յովհաննիսեանցի. Աղ. Երիցեանցի. Առ. Բահաթրեանցի և քժիշկ Կար. Մելիք-Բեգլարեանի կարղացած պատահոսութիւններից մուտք եղել է ընդամէնը . . . . . ՅՅ. 558 ր. 70 կ.

Ծախս.

1)	Պ. Աբջրուհու Թատրոնական դահլիճի վարձ.	90 ր. —
2)	Տպագրական ծախսեր	13 ր. —
3)	Մանրածախս	2 ր. 40 կ.
	Ընդամէնը	105 ր. 40 կ.

Հանելով ծախսը մուտքից՝ մնում է . . . . . 453 ր. 30 կ.
Այդ գումարից ստացուած է . . . . . 410 ր. 30 կ.
Եւ մնում է ստանալիք . . . . . 43 ր. —

Յանձնաժողովս պարտք է համարում յիշել, որ վերոյիշեալ ստացած գումարի մէջ տոմսակների գնից աւելորդ նուիրած են մեծ պ. պ Աղ. Մանթաշեանց 14 ր, Ս. Մելիք-Մեհրաբեան 6 ր, Կար. Զիլթողցեանց 2 ր, Յակ. Տէր-Յովհաննէսեանց 1 ր, Ս. Շաքուրեանց 1 ր, Գ. Տէր-Յարութիւնեանց 3 ր, և Կ. Թէմուրազեանց 50 կ:—

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, յուլիսի 15-ին:

Հայերէն լեզուին անտեղեակ լինելով ես դժբաղդաբար անկարող եմ հետեւել Կովկասեան երկրի այս անդրանիկ քաղաքակրթեալ ազգի գրականութեան, ուստի միայն պատահմամբ իմացայ Թէ ձեր ամբագրութեամբ հրատարակուող „Արձագանք“ շաբաթաթերթի մէջ լոյս է տեսել մեր երկրի մէջ „գիւղատնտեսական գործունէութեան համար հանդէսների նշանակութիւնը“ յօդուածը:

Բայց և այնպէս Թոյլ տուէք ինձ այդ յօդուածի մէջ սպրդած ինձ վերաբերեալ սխալը ուղղել: Խնդիրը այն է, որ ես երբէք չեմ ստացել պարգև որևէ հանդէսի ժամանակ լուսադեղ կամ մի այլ առարկան ներկայացնելու համար, որ ես ինքս մշակած կամ պատրաստած չլինէի:

Այս տեսակ յայտարարութիւնը ես իրաւունք կունենայի ծաղրի կամ հանաքի տեղ ընդունել, եթէ ես չգիտենայի, որ այս սխալը տեղի ունեցել Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան քսանհինգ ամեայ յօբելեանի (1875 Թ.) առթիւ հրատարակուած ցուցակի մէջ, ուր մի առ մի յիշած էին այն պարգևները, որ ստացած են այլ և այլ անձինք կամ նոյն իսկ ընկերութիւնից կամ նորա ձեռքով յընթացս 25 տարուայ նորա գոյութեան: Այս դէպքում անկասկած խօսքը վերաբերում է այն բրոնզէ մեդալին, որ ես ստացայ 1862 Թուին Լօնդոնի աշխարհահանդէսի ժամանակ, բայց ոչ Թէ ձեր յիշած տարբերակի համար, այլ Սաֆլօր (Carthamus Tinctorius) ներկատու բոյսի համար, որ լաւ որակութեան ինձ յաջողեցաւ մշակել Նուխու շրջակայքում: Միւս մեծ արծաթեայ մեդալին ես արժանացայ կայսերական ազատ տնտեսական ընկերութեան կողմից Ս. Պետերբուրգում 50-ական Թուականների վերջերում նախկին Յարաֆէդի գործնական շերամապահութեան ուսումնարանի կառավարութեան և իմ հոգացողութեամբ պատրաստած հում մետաքսի համար:

Ահա այն բոլոր պարգևները, որ ես, որքան յիշում եմ, ստացած եմ երկրիս գիւղատնտեսութեան կամ արդիւնագործութեան մասերի վերաբերութեամբ, չնայելով, որ վերջին 15 տարի իմ ստանձնած պաշտօնիս առթիւ ես հրաւիրած եմ եղած մասնակցելու Թէ հայրենի և Թէ օտար աշխարհահանդէսներին, որին միայն Կովկասի վարչութիւնը մասնակցած է եղել:

Խոնարհաբար խնդրելով ձեզ ներկայ իմ նամակիս տեղի շնորհել ձեր հրատարակած շաբաթաթերթի մերձակայ համարներից մինի մէջ, ընդունեցէք և այլն:

Ն. Զեյդլից.

Տալով Կովկասեան Վիճակագրական Մասնաժողովի նախագահի այս նամակը, մենք մեր կողմից կ՝ասենք միայն որ պ. նամակագիրը խոստովանում է ինքը որ մեր առաջնորդող յօդուածի մէջ առաջ բերած փաստը գտնվում է 1875-ի պաշտօնական հրատարակութեան մէջ. մեզ մնում է միայն ցաւել որ 7 տարուայ ընթացքում յարգելի պարոնը առիթ չէ գտել ուղղելու իրան քայ յայտնի պաշտօնական հրատարակութեան մէջ սպրդած սխալը:

* * *

ՆԱՄԱԿ ԴԱՆՃԱԿԻՑ

Յունիսի 28-ին:

Կովկասի հայաբնակ քաղաքների մէջ հաղիւ Թէ լինի մինը, որ կարողանայ մրցել Դանճակի հետ յառաջիմութեան, անտարբերութեան և դէպի ազգայինն ունեցած տառնուաթեան վերաբերութեամբ: Բնակիչների Թուին, նոցա քարեկեցութեան և մինչոցներին նայելով՝ Դանճակի հասարակութիւնը իրաւունք չպիտի ունենար չետ մնալ միւս քաղաքների հայ հասարակութիւններից, նորա եկեղեցիքը, ուսումնարանները, հասարակական միւս հիմնարկութիւնները պիտք է աւելի բարեյաջող պայմաններում լինէին, հասարակական կեանք, համերաշխութիւն, մտաւոր դոնէ դանդաղ չարժողութիւն պիտք է նշմարուէր նոցանում, բայց այսօր այդ ամենից և ոչ մինը կարող ես դանել: Ամենքը այստեղ զբաղուած են իրանց առօրեայ գործերով միայն, ամենքի ուշք ու միտքը նուիրուած է բուկական ապահովութեան. ապագան և այն էլ աւելի բարեյաջող ապագան նոցա համար կատու Թէ գոյութիւն չունի: Դանճակեցիք հոգով և մարմնով նուիրուած են փողին, բայց այդ փող աշխատելումն էլ գործ են դնում չարչիական մինչոցներ և անձնական, եսական, սահմանափակ շահերը միայն պաշտպանելով՝ մինչ ես երեսի վերայ և անուշադիր են Թողնում այն հարցերը, որոնցից ամբողջ հասարակութիւնը, հետևապէս և իրանցից իւրաքանչիւրը պիտի օգտուին մշտապէս: Որպէս ապացոյց եմ ստոծներիս կ՝յիշեմ այստեղ շատերից գոնէ երկու խնդիրը, որոնք գանճակեցոց համար կեանքի և մահուան խնդիրներ կարող են համարուիլ:

Յայտնի է ամենքին, որ մօտ ժամանակներս երկաթուղին կապում է Կովկասի երկու առևտրական կենտրոնները միմեանց հետ: Ապագերի զարգացման և բարեկեցութեան գործում երկաթուղիների խաղացած դերը մեծ է և հոկայական, սա գիտեն նոյն իսկ գանճակեցիք, բայց արի տես որ՝ մեր օրհնեալ Դանճակը, որ Բաքու-Թիֆլիսեան երկաթուղու գծի վերայ եղող միակ նշանաւոր քաղաքն է, գծից մի կողմ ընկած է մնում բուսականաչափ հեռու և այդ է հարկէ է չնորհս մեր գանճակեցոց անհոգութեան և թուլամորթութեան:

Երկաթուղու գիծն անցկացնելու համար նախապատրաստական հոգացողութիւնք և ձևաչափութիւնք լինելու ժամանակ գանճակեցիք խռմփում էին անհոգութեան քնի մէջ, իրանք իրանց յուսադրելով, որ գիծը անպատճառ անցնելու է իրանց քաղաքի մէջով, որովհետև դա միակ քաղաքն է ամբողջ Ճանապարհի վերայ, բայց նոցա չար բոզ-

ղեց տանձը նոցա բերանը չ'ընկաւ կոխը դէպի բարձր և մի գեղեցիկ առաւօտ նոքա լմացան, որ ամենայն ինչ վերջացած է և գիծը երանց քաղաքից հեռու է ձգուելու: Ճշմարիտ է, այնուհետև սկսափեցան մեր քաղաքացիքը, խնդիրները տուեցին, ծախքերի տակ ընկան, բայց բոլորն անօգուտ՝ նոցա՝ ուշադրութիւն դարձնող չեղաւ: Թուրքը ի զուր չէ ասում թէ հայն չետի խելքը նմը պիտէր:

Մի ուրիշ օրինակ, որ աւելի չօշափելի կերպով ցոյց է տալիս գանձակեցոց անտարբերութիւնը հասարակական հարցերում: Գանձակը այն տեսակ քաղաքներից է, որոնք մաքուր և առատջրաւոր ջրից զուրկ են կատարեալապէս: Փոքրիկ գետակը որ անցնում է քաղաքի մէջով, դեռ գառնան սկզբից բաժանւում է քաղաքի մէջը և չորանալով եղած քազմաթիւ և ընդարձակ այգինները ջրող առուներին վերայ, այնպէս որ քաղաքի մի մասը մեւսի հետ կապող կամուրջի տակից համարեա ջուր չէ անցկենում: Այդ բազմաթիւ առուներից մի մասը մտնում է քաղաքից դուրս գտնուող այգինները, իսկ մեւս փոքրագոյն մասը մտնում է քաղաք և մանր ճիւղերի բաժանուելով տարածւում է քաղաքի մէջ: Այդ փոքրիկ առուակների մէջ են թափվում ահա քաղաքի բոլոր աղտոտութիւնները և հէնց դռոցանից են ջուր վերառնում բնակիչները: Աւելորդ է ասել, որ այդ ապականած ջրերը ամառուայ դառնաշունչ շոգերի ժամանակ մեծ նպաստելով ուրիշ անցաջող պայմանների հետ հազարաւոր հիւանդութիւնների պատճառ են դառնում: Թէև Գանձակը, բացի այս ապականած առուակներից, ունի մի քանի աղբիւրներ, կամ աւելի ճիշդ, ստորերկրեայ ջրանցքներ, որոնք անցնում են քաղաքի մէջով և մի քանի կէնդրոններում բացվում են, բայց այդ աղբիւրների ջուրը աւելի վնասակար է, քան չիշեալ առուակները, որովհետև դրա բերած են քաղաքից դուրս եղած ճահճուտներից և այսպէս անուանեալ՝ սև ջրեր են (զարաւաս) այս պատճառով էլ բնակիչներից շատերը գետի ջուրը դարձեալ նախապատիւ են համարում:

Մաքուր ջրի պակասութիւնից առաջացած վնասները բոլոր գանձակեցոց համար ղգալի է. ամենայն ընտանիք ի բաքանչիւր տարի, մանաւանդ ամառները, երբ ջրերը պակասում են, իւր մէջքի վերայ տանում է այդ ծանրութիւնը, կամ հիւանդանալով կամ իւր անդամներից մինը զոհելով, բայց մինչև այսօր դեռ ևս հասարակութեան ներկայացուցիչները չեն համաձայնուել միմեանց հետ և այդ չարիքի առաջը չեն առել: Վաղուց արդէն կառավարութիւնը, առողջարար ջրի պակասութիւնը նշմարելով, վճռել է օժանդակել քաղաքացոց, որ քաղաքի շրջակայներից մաքուր և առողջարար ջուր հանեն քաղաքը և դորա համար նշանակել է 45,000 րուբլի, և ի բաքանչիւր տարի մի որոշ մասը վճարում է այդ դումարից: Ջնայելով այս խոշոր օժանդակութեան, չնայելով և այն հանգամանքին, որ ինչպէս երանք քաղաքացիք վկայում են, եթէ երանց կողմից աւելացնեն 10—15,000 րուբլի, շատ մեծ դիւրութեամբ կարող են առատ ջուր բերել շրջականերից, այնուամենայնիւ զարհուռնեալ և արհաջան գանձակեցիք մինչև այսօր ոչինչ չեն ձեռնարկել, ոչինչ չեն արել և ամենայն տարի տուժում են երանց ծուլութեան և դատապարտելի անհոգութեան համար և տուժում են ոչ միայն գրպանով այլ և հոգով ու մարմնով: Ճշմարիտ է, մօտ ժամանակներս գանձակի առաջնորդները ժողովուեցան, խօսեցան այս կարևոր հարցի մասին, գոռացին, գոռգոռացին, բայց որքան ինձ յայտնի է, դեռ ևս մի հաստատ և դրական հետևանքի հասնել չկարողանալով, ցրուեցան ամենքն երանց տները:

Եթէ ընթերցողը այս երկու առաջնակարգ հարցերը բաւական չէ համարում դանձակեցոց հասարակական անտարբերութիւնն ու անհոգութիւնը դատապարտելու համար, ապա ես խոստանում եմ մեւս նամակով որոշ փաստեր ևս առաջ բերել ի փաւս նոցա:

Նիկողայոս Տէր-Ղևոնդեանց:

*
* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Կ. Պոլիս, 3 Յունիս 1882

„Մեղու“ լրագրի 64-ը համարի մէջ հրատարակուած մի նամակի հեղինակին ենձ, որտեղ, խօսելով գերատեսական ժողովի անցեալ տարուայ կազմակերպութեան մասին, բարեմտութեամբ յիշուած է այն անձանց անունները որք Թատրոնի աւելորդ ծախքերը անելու պատճառ եղել են և այդ անձանց կարգն յիշատակուած է նաև իմ անունն: Կը փութամ յայտարարել այդ նամակագիրս պարոնին թէ ես իմ Թատրոնի մէջ արած ծառայութեանցս համար ամբողջ տարի ոչինչ բնաւ փող չեմ ստացել: Ամենայն պաշնադրութեան ժամանակ պայմաններէն մին էր նաև, թէ և բերանացի, որ անօրինութիւնը իմ երեթևեկութեան ծախքն էլ պէտք էր վճարէր այն է 200 րուբլի ընդամենը, և ես լոկ իմ յօժար կամօքն հաճել եմ Թատրոնական գրեթէն զբաղելու, զորս եթէ դրամով հատուցանել հարկ լինէր առնուազն 500 րուբլի պէտք էր վճարել անօրինութիւնը: Ուրեմն ես ինքս փոխանակ աւելորդ ծախքի դուռ բանալու անօրինութեան բաւական մի գումար նորան խնայել եմ տուել:

Յաւելով որ այս առթիւ կը հարկադրեմ զձեզ նամակիս հրատարակութեամբը „Մեղուի“ մի սխալն էլ ուղղելու վերստին՝ խնդրեմ որ ընդունիք իմ խորին յարգանացս հաւաստիքը:

Անդօն Գոլոյ

ՏԱՃԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱՄԱԿ ՎԱՐԱԳԻՑ

22 Յունիսի 1882 թ.

Վանի համար վերջին օրերս Կ. Պոլսէն երկու թիւրք պաշտօնակալք եկած են, որոց մուարիճի անուն կուտան (ուսումնական ժողովք), մէկն դիւանապետ և միւսն դիւանագալիր կամ տեսուչ ու քարտուղար. սոքա պաշտօն ունին որպէս թէ հսկել բոլոր հայ գպրոցաց ուսման և բարեկարգութեան ընթացքին վերայ, եկածնուն պէս ընդ փոյթ երեք թիւրք և երեք հայ անդամներ կընտրեն իրենք իրենց. թիւրք անդամներն են՝ քիւչիւկ Իպրահիմ, Մուստաֆայ և Հասան էֆէնտիները, որք թէ մոլեռանդութեամբ և թէ ուսմամբ մեծ համարում ու ազդեցութիւն ունին, մանաւանդ իրենց թէ կէս դարէն աւելի շատ խիստ ու մեծ դերեր խաղացած են մեր ազգին վնասակարութեան համար: Իսկ հայերն են Պանի-

բեան Յակոբ, Մարուքեան Մկրտիչ, և Գալճեան մահտեսի Գէորգ էֆէնտիները, որ նոյնպէս զրան պաշտօնեայք են, և երբէք ազգին օգտակար եղած չեն։ Ասոնք ահա ուսումնական ժողով կազմած են նորեկ տաճիկ պաշտօնէից նախագահութեան ներքև, և պիտի ազդեցութիւն ունենան մեր աշխարհի ուսման հանդիսին վրայ։ Եւ արդէն սկսեր են զպրոցներ շրջիլ, տղայք և օրիորդք համրել, իրենց գասեր ու ուսման առարկաները քննել ու գրել, և ստիպել ուր որ թիւրքերէն կարդալ չկայ, նոյն լեզուն իբրև պաշտօնական բարբառ անհրաժեշտ համարել տալ։ Թէ զպրոցներու մէջ կախուած նկարներ նկատել և թէ եկեղեցեաց մէջ գտնուած պատկերներ քննել, մանաւանդ անոնք որ ձի հեծած են և տեգ ունին ի ձեռին, ինչպէս են սուրբ Գէորգ, ս. Սարգիս, ս. Թէոդորոս զօրավարներն և այլն։ Ի հարկէ կհասկնայք իրենց միտքն ու գաղափարն։ Բայց թէ ի՞նչ ազդեցութիւն ըրած է տեղացւոց վրայ, այն մասին պէտք է ասել որ բնաւ մինչև յարդ կարևորութիւն տրուած չէ, զի տեղացւոց մտքերն գարձեալ լուզուած է հայի խնդիրով, այս տարի երաշտ լինելուն ցորեան պակաս է, և որ ասկէ ամիս մի առաջ ծախուածէն այժմ կրկին դնով բարձրացած է. ուստի ոչ թէ սովի այլ սղութեան շատ միջոցներ ու ապացոյցներ սկսան երևնալ. ապացոյցն որ հացին դին սկսաւ կրկնապատկիլ, միջոցներն՝ որ կառավարութիւն արտաքուստ կպատուիրէ արտասահման գտնուող թուփառիկ քրդաց ցորեն չծախուի, և ներքուստ ինքն սուղ գինով կուտայ՝ և այս կնէ որպէս զի գիւղերու երեսներն աւելի գընով վաճառէ վարձակալներուն։ Այսպէս ըրաւ նա՝ նաև նախորդ սովի տարուան. սղութիւն՝ գարձուց իրական սովի։

Տեղւոյս ազգ. կրօնական և քաղաքական ժողովներու երկոտարուան շրջանն լրանալով հրաժարականին տուին և քանիմ օրէն նորերն պիտի ընտրուին։

Սրբազան հայրիկ իւր հրաժարական տուաւ, գեռ յայտնի չէ թէ տեղւոյս ընդհանուր ժողովն և թէ պատրիարքարանն պիտի ընդունի՞։

Շատախ գաւառն որ ասկէ առաջ քրդերու հարբուտահարութեանց համար պահապան զօրք ուզած էին կառավարութենէն իրենց ընչից ու կենաց պահպանութեան յուսով, այժմ նոյն իսկ տէրութեան կանոնաւոր զօրքերէն իրենց ընտանեաց պատիւ կբռնաբարուին, որոց համար հարիւրաւոր անձինք եկած են քաղաք բողոքելու, տեսցուք թէ ի՞նչ կարգադրութիւն կլինի։

Կասրիկցի անուանի քիւրդ տրպաղ աղայի պահարեղէններն կէյտանցի քրդերն յափշտակելով կտանին, և ինք կգնայ իւր սպրանքներն դարձնելու, կսպաննուի նոյն աւազակներէն, որով կազատուին Անձևացեաց գաւառի դժբախտ հայերն։

Բաղէշի ժողովուրդ կրկին սկսեր են կառավարութեան խատութենէն դարձեալ նեղուիլ, որ բռնի նոյն Բաղէշ քաղաքէն մինչև ի Կարին արահետ չինելու համար կտիպէ խեղճ ժողովուրդն, որուն անցեալ տարի շատ չանքով ու գոհերով դիմադրեցին։ Բայց կերևի որ անոնք անցուկ մոռցուկ ընելով, գարձեալ իրենց ճնշումն ու անիրաւութիւն ի գործ պիտի դնեն, զի այն ատեն պատրիարքարան լսել կարելոյն ազգայնոց օգնեց, իսկ հիմայ, որ պատրիարք ներկայ չէ, ու կփոխէի ու կը ծածկուի, ով պիտի հոգայ Սալնոձորոյ անբախտ հայոց պաշտպանութիւն...։

Մշոյ առաջնորդն Կ. Պոլիս, և ս. Կարապետի վանահայրն վախճանելով, նոյն գաւառի ազգայնոց վիճակն աւելի թշուառ է, երէկ չէ առաջին օր Մշոյ պուլանխի Կոր անուն վանք աշակերտներէն Հինգ տեղս եկան սըրբազան Հայրիկին բողոքեցին իրանց ժառանգաւորաց գպրոցի փակման համար, զոր բացած էր Կ. Պոլսոյ Միացեալ ընկերութիւն, և աղաչեցին գնորին սրբազնութիւն և կուզէին մնալ ի Վարագ, բայց չընդունուեցաւ իրենց խնդիրն։ Հայրիկ յանձնարարական գիր գրեց ի Բաղէշ Գարեգին վարդապետին որ գնայ ի Մուշ և վերստին սկսել տայ և բանայ Կորայ վանուց ժառանգաւորաց գպրոցն։

Ա. Տ.

* * *

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Յունիսի 25-ին.

Ծննդեան տեղւոյս, Թէֆլիսի մէջ՝ գրեթէ առանց դուրս գալու, համեստ և անաղմուկ աշխատանքի (զոր լեզուները կ'սեն անգործունէութեան) վեց տարի անցնելուց յետոյ—սրբելենով, ընկերներով ու ծանօթ—բարեկամներով շրջապատուած՝ դարձեալ մի անգամ հեռացայ հայրենական կտուրից՝ ուղևորուելով դէպի արտասահման։

Արտասահմա՜ն, որչափ անուշ և գեղեցիկ է հնչում այս բառը։ Այո, բայց սա այն արտասահմանը չէ, որտեղից վեց տարի առաջ վերադառնում էի՝ երիտասարդական աշխոյժ սիրտս քնքոյշ ու փափուկ զգացումներով և տպնիւ ու ազատ գաղափարներով լցուած...

Այն երկիրը, որից հեռանալով գալիս էի դէպի հայրենիք—Ֆրանսիան էր։ Այնտեղ ծագում էր և այժմ ծաւալւում է ազատութիւնը, աճում՝ զարգանում էր և հիմայ վսյլում՝ լոյս է տալիս գիտութիւնը։ Անկեղծ ու իրաւամբ ասենք մարդիկ՝ որպէս հարազատ ու հաւատարիմ զաւակները մարդկային վսեմ սկզբունքներ ծնող քաղաքակրթութեան, գըտնում էին և քայլում են ներկայումս առաջդիմութեան անոսահման ճանապարհի վերայ։ Այնտեղ մի ամբողջ ազգ՝ անխառն ու սեպհական կանոքով, իւր մայրենի հարուստ լեզուով, համաշխարհային գրականութեամբ և մեծափառ հայրենիքի սքանչելի պատմութեամբ ապրում՝ կեանք է ունենում։ Հասարակական ազատ կեանք, մարդավայել կացութիւն, անհատական իրաւունք, կարգ և օրէնք, սուրբ սէր և մաքուր համակրանք՝ մի խօսքով շունչ և կենդանութիւն վայելում է այնտեղ ամեն մի անհատ, եթէ աշխատաքար մասչում է նոցա։ Այո, այնտեղ—քաղաքակրթի Ֆրանսիայում, որ իւր մեծահռչակ Փարիզ մայրաքաղաքով մեչա եղել է բարձր գաղափարների թևլատրիչ ու նախաձեռնող և ազգային ամեն

տեսակ բարօրութեան օրգանն սկզբունքների որոնման...: Այն, բայց այն ցանկալի երկիրը և «դպրեվրկ» չքեղ քաղաքը չէի գնում ես, թէև ուղևորվում էի մասամբ նոյն ճանապարհով: Այլ չուում էի դէպի Թիւրքիայի մայրաքաղաքը՝ յանձնաց կայսրների նախնի Բիւզանդիոնը, ուր այսօր ուղտերու մարդարէի Հոլոպատ տեղապահն է իշխում... Այն, չուում էի ես այս կողմը, այցելելու մանաւանդ երկրիս վերաց ամենաբազմաթիւ Հայ գաղթականութիւնը, որ՝ հարիւր տարիներով առաջ հաստատուելով Հայաստանից հեռու այսպիսի մի երկրում՝ ապրում է այժմ՝ ասես թէ իւր տանը բնակուելով...

Գնաց օր կայ, որ երկաթուղու կայարանում մնաս—բաւովի չափ հանդոյցներից միմեանց տալուց յետոյ՝ հեռացայ ձեղանից: Յուսով եմ, որ չէք մոռացել: Այն ցախկին ունեցած զգացումներս ու տպաւորութիւնները ուրախութիւն չէին պատճառում ինձ, որչափ էլ Ճանապարհորդութեան նպատակը գեղեցիկ և հրապուրիչ լինէր:—Միշտ այսպէս է. երբ գարնում է Ճանապարհ ընկնելու ժամը, եթէ ուղևորը թափառաշրջիկ չէ, կարծես թէ չէ հաւատում, որ պիտի հեռանայ իւր տեղից, պիտի բաժանուի իրաններից: Սակայն ինչ որ երևակայութիւնը երազում է՝ իրականութիւնը անմիջապէս փոխում է, և մի քանի ժամուայ մէջ ծանօթի կամ հին պատկերները բոլորովին անյայտանում են մարդուս աչքից և նոր նոր դերպարաններ ու տեսարաններ են ներկայանում:

Նոյն երևոյթը ունեցայ ես՝ երբ երկաթուղու գնացքը սկսեց շարժուել և արշաւել Թիֆլիսից դէպի Փոթի: Ահաւասիկ անծանօթ մարդիկ և նոր ծանօթներ, նոր պատկեր և ուրիշ տեսարաններ, որոնք շարունակում և փոփոխում են մինչև ուր որ դնաս: Եթէ մի բան կայ, որ չէը փոխում մեր Ճանապարհի ընթացքում, այդ ամպամած երկինքն էր: Գիշերով և առաւօտեան արշալոյսին թափելով առատ անձրև ջրատնանդ բոյսերի ու խոնաւասէր գետնի վերայ՝ շարունակում էր նա նոյն Թուխ կերպարանը ցոյց տալ մեզ ամենքիս: Իսկ չոգեկառքին ոչ մի բան չէր արգելում հպարտութեամբ սուլել և հեռուից-հեռաց տալ իւր արագաքայլ գալստեան, թէ բացէք Ճանապարհ, ահա երեում և տանում է բազմաթիւ վագոններ մարդկանցով լցուած: Հեռանալով հետզհետէ Թիֆլիսի ոսկեաշէն, մացառուտ և գրեթէ չոր շրջականերից, ուր երևում է, թէ երբեմն այդտեղ ստուերախիտ անտառները ոչնչացրած են անխնայ ձեռքերով, առաջ ես գնում Վրաստանի հիւսիս-արևմտեան կողմը և ահա գետինը կանաչազարդ ծառերով և գոյնզգոյն ծաղիկներով մի վրայ զարդարուում և ուրախացնում է նայողին:—Գետերը, գետակները ու այլ և այլ ջրերը հոսում՝ շրջում են այս ու այն կողմը և մեխանուշելով ծիծեռնակների ու զանազան թռչունների ձլվլոցին, օդը ճեղքող շոգեկառքի շոգին, վագոնների տակտոցի հետ՝ ասես թէ մի ազմկալի համերգ են կազմում: Մարզերում ու դաշտերում արածող չորքոտանիները՝ չը հաճելով խաղաղ բնութիւնը ընդմիջող այս ճչող երևոյթին յատկում՝ հեռու են փախչում գնացքից: Իսկ բազմերանգ ու ցնծոտի հագուստներում պատապարուած գիւղացի կանայք և տղամարդիկ՝ բերաններդ բաց, տասը տարի կայ, որ նայում են ապշած և զարձեալ կարծես չեն ուզում համոզուել, թէ մարդկային մտքի հրաշալի արգիւնքն է այդ «կատարելն մեծ հրեշը»—երկաթուղին: Առաջ գնալով այսպէս՝ հասանք և անցանք այլ և այլ գիւղեր, գիւղաքաղաքներ և մտանք Իմերեթի հարուստ անտառը, որ սակաւին այրելու փայտ է մատակարարում երկաթուղու ընկերութեանը: Որչափ չուտափոյթ էլ լինէը մեր գնացքը և աչքերից խլէը դիտելու արժանի տեղերը, այնուամենայնիւ վագոնի լուսամուտներից մարդուս աչք էը ընկնում սիմոնտրի դաշտերը, որ Իմերեթի երկրի գլխաւոր բերքից մէկը լինելով՝ մինչև անդամ արտահանվում է օտար աշխարհներ, ահա տեղ երևում էին և Ձխախտաձի նոթարյան արտերը, որոնք մի ճանապարհ իմերեթի կարծիքով, նոյնպէս ապագայ պիտի ունենան:

Սակայն այս բոլորը կարծեմ այնքան չը պիտի հետաքրքրեն ձեզ և ահա մոռանում էլ վրայ հասնելով՝ հասու ու կասը նկատողութիւններս էլ դադար են առնում և մենք մտնում ենք Համարեա թէ մի Ճահճոտ գաւառ: Որովհետև մօտ երկու ժամ կայ մինչև Փոթի հասնելը, ուստի կարելի է մի վոքը հանդստանալ, ուշադրութիւն չը դարձնելով իշխանի սկսած դորաերկի կանչոցին, որոնց դէմ էս չէը ստացնել և հոտոցրել անառուտայ տաք արևը՝ նետուել տատրակելու համար... Գիշերուայ տասը ժամին էը արդէն, որ գնացքը հասաւ Փոթի, ուր երկաթնցոպանների համերգը աւելի աստիճանաւոր վիճակ խլեցին Ճահճային խոնաւութիւնը՝ խառը ծովային օդի բուրմունքին և զով տուեց մոտաւորութիւնը ծովի, որին Բիւն գետի լայն բերանը առ ժամ մի վոխաբերում էը մեր երևակայութեան մէջ: Ոչ նպատակ և ոչ կարողութիւն ունիմ նկարագրելու տեղագրական յարմար դիրք, բայց վատաւոյջ օդ ունեցող այս ծովեզերեայ աւազոտ քաղաքը, ուր, ինչպէս ասեցի, գիշերը մտայ և առաւօտը դուրս եկայ այնտեղից: Այնու ամենայնիւ անցորդի աչքից չէը կարող խուսափուել այն եզերոյթը, որ Փոթի քաղաքը հետզհետէ աւաջդիմութիւն է սրել, եթէ ոչ իւր անյարմար նաւահանգստի կանոնաւոր և վերջնական դրութեամբ, գոնէ մեծահարուստ և բնակիչների բազմանալու վերաբերմամբ: Բիւնի ափերին տասնեակով առաջ ցիցերի վերայ կառուցված կամ աւելի լաւ է ասել, կանգնած խոշհների ու տախտակամածների վոխանակ, որոնք այսպիսով ապահովում էին հիղձից՝ գետի յորդանալու ժամանակ, երևում են այժմ եւրոպական ձեւով շէնքեր, խանութներ և այլն՝ բաւական լայն փողոցներով: Քաղաքի կենդրոնում ջենովացիների ձեռքով կառուցված այժմ աւերակ ամրոցը փոխել են հասարակաց պարտէզի, որ չէը կարողացայ այցելել՝ Փոթիի beau monde-ը տեսնելու:

Ոսկեգմբեով հարուստ քաղաքին, ուր նաւելով չուում էին համարձակ արգոնաւորդները այդ ցանկալի առարկան ձեռք բերելու, շատերը արդէն գուշակում են առևտրական մի մեծ կենդրոն լինելու ապագայում.. Բայց այս թուակաները հասնելու համար, կարծեմ, գեռ շատ երկար ժամանակի պէտք կայ, մանաւանդ եթէ չեշենք, որ քանի տարի շարունակ կառուցող և մելիօնները կլանող՝ տախտակի անառարատ արհեստական նաւամատոյցը այսօր էլ անկարող է մեծ շոգենաւը ընդունել իւր ծոցում: Ահա ցանկանք որ նոր նաւաճած, և դեռ շատ բանով անպատրաստ Իմերեթը արդէն փառաւորապէս մրցում է Փոթիի հետ և կարճ ժամանակում այս վերջինից շատ գերազանցելով՝ առաջ կ'երթայ իւր գեղեցիկ բնական նաւահանգստի առաւելութեամբ:

Փոթիի վոքրաթիւ հիւրանոցների բոլոր սենեակները բռնուած լինելով՝ ստիպուեցայ ես գիշերել մի մանաւոր տան մէջ, որի տանտիկինն գերմանուհու աւերակ ոճով՝ ոչքան էլ անհաճոյ երևէը, այնուամենայնիւ նորան էին դիմում իւր հիւրերը: Առաւօտեան ժամը ութն էր, որ կառքով արշաւեցի մօտ երկաթուղագիծն և հասայ նաւահանգիստը, ուր ոտս ընկերութեան փոքր շոգենաւը ընդունում էը Ճանապարհորդներին Բաթում հասցնելու և այնտեղ սպասող մեծ շոգենաւներին յանձնելու համար: Ես

ահա պատը ու պայծառ կապոյտ երկինքը՝ յուրկա ամպի տաք արևի ոսկեզօծ ճառագայթներով՝ խաղում էր լայնատարած Սև ծովի հետ, որի սովորական կատաղի ու շառաչող ալիքների հետքերը դեռ ևս ուժգին խլուում՝ զարկում էին նաւամատոյցի հաստատոյլ պարսպին և էլի ետ տեղատուվին անում:

Մօտ երկու և կէս ժամ նաւելով բաց ծովի մէջ՝ ժամանեցինք Բաթում, որ ինչպէս ասում է մի ֆրանսիացի ճանապարհորդ, Սև ծովի լաւագոյն և ապահով նաւամատոյցներից մէկը լինելով՝ կատաղի ալիքներից բաւական փակուած, կարող է մեծամեծ նաւերը հիւրասիրել իւր ծոցում: Ես իրաւ, չափաւոր մեծութիւն ունեցող շոգենաւը, որ բերեց մեզ Կ. Պօլիս, մօտ տասներկու քայլի վերայ էր կանգնած ծովափից: Բաթումի մասին ձեր գիտցածից աւելի բան չեմ կարող ասել, որովհետև ընդամենը չորս ժամ մնացի այնտեղ: Թէ որչափ գուրկ եմ ուղևորը—խմբագրի յանախութիւնից՝ այդ դուք կընդունէք լաւ կարող էք դատելէ իմ նամակից: Ինչ և է, չմոռնալ պէս մէջ տեղը չը մնալու համար՝ մանր եկայ մի քանի փողոցները, ուր սրճատիրները, հիւանդը և մշակները մեծ ջանքով աշխատում էին նոր շէնքերի վերայ՝ դարձեալ նոր շինութիւններ աւելացնել՝ դեղեցկացնելու և բանուորաւոր քաղաք դարձնելու այս ծովեզերեայ աւանը: Բաթումը սկսել է մրցել Փոթիի հետ ամեն բանով և, ինչպէս ասեցի, մեծ ապագայ ունի իւր առջև: Ժամանակով կենդրոն և պահեստ շատ մարդու գառնալով Անդրկովկասի, հարաւային Ռուսաստանի և արտասահմանեան վաճառականութեան՝ լիովին կարող է գերազանցել Փոթիից, մանաւանդ որ շուտով երկաթուղի գծով միանալու է Թիֆլիսի և Հեռևաքար Բագուի հետ: Մարդ գալով այս ու այն կողմը և նկատելով գանազան ազգերին պատկանեալ անձանց և առաւելապէս լազերին ու աճապընդներին՝ ես էլ ուղեցի „մտնել ազգային շրջանը“ մի պարոնի պէս և գնացի մեզ ամենքիս ծանօթ տէր Կոստանդ քահանային, որ Բաթումի մասին մանրամասն տեղեկութիւնները ինձ հաղորդելու համար՝ պատմեց առաջարկեց մի քանի օրով էլ մնալ հենց մնալ: Մանրամասն տեղեկութիւնները և ուրիշ խոսակցութիւնները աւելի պատրաստ էին տէր հօր անկեղծ հիւրասիրութեան, որ դժբախտաբար ստիպուած էր ինձ թողնելու: Շէնց երկրորդ անգամ շոգենաւի ուղիչը՝ հրաժարելով ճանապարհորդներին, և ես խոհոյն շտապեցի քայլերս այն կողմը: Ահա անց ու դարձ անող „ֆէտեր“, շրջիկ —ձայնող մանրավաճառներ, ջրաբաշխներ և մինչև անգամ լրագրամատներ խառնուում են մխիթարց հետ սրևելեան բազմերանգ անհատասարութեամբ, որ նկարչատէր եւրոպացի ճանապարհորդին հետաքրքիր ու հաճելի դիպուած կը տայ գեղեցկօրէն նկարագրելու համար: Լրագրամատին մնայն կանչեցի, „Батумскій Листокъ“ ռուս տեղական թերթի № 6-ը առայ և մտայ շոգենաւը: Գատառական թերթը ուզում է ծառայել իւր գատառի շահերին, սորանից աւելի լաւ ճանապարհ չէ կարող ընտրել նորա ամբարիշտը:

Շոգենաւը սկսեց շարժուել և հետևել Անատոլիայի ափերին, ուր Բաթումից կտայ՝ ուզում էի ես տեսնել հայոց ինքնավարութեան պրօեկտի մէջ յիշուած Բիզա նաւահանգիստը, բայց դժբաղտաբար դա այնչափ հեռու մնաց մեզանից, որչափ հեռու է երևում Բերլինի գաշնադրութեան 61-րդը յօդուածի դործադրութիւնը: Մեր նաւի երկար տանտակամածը մի խառնիխուռն պատկեր էր ներկայացնում իւր գանազան ազգի ճանապարհորդներով: Ահաւասիկ այս կողմը էջմիածնից վերադարձող հայ ուխտաւորները, որոնք մեռանողհոգու թեան սուրբ հանդէսին ներկայ լինելով՝ նորից քաջ էին իրանց ճակատին սրբազան մեռոնը դոնէ հայութեան հաւատը իրանց սրտերում վերանորոգելու համար, այն կողմը Կ. Պօլիս մեկնող մանրավաճառ շահախնդիր պարսիկ „հեմշաբինեը“ սրամայր գլխարկներով՝ նորգելէն բերանին, այդ կողմը բազուկներն ու կողերը յօդնած հայ մշակները, որոնք Տրապիզոնի ճանապարհով դնում են մայր Հայաստան գուցէ իրանց ոպառած ուժերը վերականգնելու: Թեղճ մարդիկ, երանի թէ ձեր բազուկները այսուհետև ձեր ընտանիքի և սուրբ հայրենիքի պաշտպանութեան և բարօրութեան սուրբ դործին ծառայէին. . . . Այսպէս նայելով և երբեմն այլ և այլ հարցեր առաջարկելով պանդխտութեանը զոհուած այդ հայերին՝ լսում էի նոցա խմբովին տխուր մեղեդիքներն ու հառաչանքները և սրտով ցաւում էի, որ սոցա ճանապարհ դցելով մինչև Տրապիզոն, կը պատահէին այնտեղ էլ մի ուրիշ խումբ հայ համալներին, որոնք սոցա հակառակ՝ թողնելով իրանց ծննդավայրը, պիտի չուէին երբէք հետ մնասին դէպի արևմուտ, դէպի սուլթան աշխարհակալները մայրաքաղաքը:—Վրայ հասան երեկոն և նորածին լուսինը, մի փոքր հայեացք գցելով մեզ վերայ՝ թաք կացաւ հեռու հորիզոնի ծայրում և թոյլ տուեց պապղան աստղերին աւելի պայծառանալ և մեզ լուսով լուսաւորել երկնային հաստատութիւնը: Շատ չանցաւ՝ նաւաստիները վառեցին շոգենաւի բոլոր լապտերն ու ճրագները, և կսկսեց կատարեալ մութը, որ ճանապարհորդների հետաքրքիր աչքերին արգելէց նայել անսահման երկացող ծովի այս ու այն կողմը և զուարճանալ մեր նաւին ուղեկցող դելփիններով խաղով: Ամեն բան հանդստացաւ և խաղաղութեան մէջ մտաւ, բացի նաւապետից և նաւաստիներից, որոնց չանձնած էր մօտ երեք հարիւր հոգու կեանքը: Կատաղի և ծովի ալիքներն էլ՝ չը կամենալով խանդարել այդ ներդաշնակութիւնը, հարթուում, հանդարտուում էին շոգենաւի տակ և ջրի մակերևոյթը ասես հայելի էր դառնում: Խորհրդածութեամբ հայելով ծովային օդով ու մշուշով ծածկուած այս բոլոր տեսարանին՝ մնացի մի երկու ժամ զովարար տախտակամածի վերայ և ուզեկից-ներիս հետ երկայ խօսցեկ՝ բնութեան անհրաժեշտ պարտքը տալու համար. . .

ՅԱՐՈՅ

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա Ն Գ Լ Ի Ա

ԳԼԱԴՍՏՕՆԻ ՃԱՌԸ:

Պատասխանելով Գուրլէի և Լաուսօնի առաջարկութեանց Եգիպտոսի գործերի մասին, Գլադստօնը ի միջի այլոց ասաց՝

Ես միայն մի բան ունիմ նկատելու, այն է որ ռամբակոծութիւնը տեղի չունեցաւ եգիպտական պարտաթղթերի տէրերի մասնաւոր և բացառական շահերի համար. ուղիղն ասած այդ բանը ամենից քիչ ի՝ նկատի է առնուած: Ֆրանսիական տէրութեան վերաբերութեամբ կասեմ թէ բոլորովին ինձ չէ վերաբերում քննել այն պատճառները,

որ ստիպեցին Նորան մասնակցել այն միջոցներին, որոնց դիմեց Բրիտանական տէրութիւնը. Ֆրանսիական տէրութիւնը կատարեալ իրաւունք ունի գործել այնպէս ինչպէս որ Նա գործեց։ Անգլիան և Ֆրանսիան պատասխանատու են իրանց պարլամենտների առաջ և պատուելի անդամը (Գուրլէյ) շատ է մոլորւում, եթէ կարծում է թէ որևիցէ հանգամանքի տակ գործողութեան մէջ տարբերութիւնը նշանակում է թէ Անգլիայի և Ֆրանսիայի բարեկամական յարաբերութեանց մէջ առաջ է եկել փոփոխութիւն։ (Ծափահարութիւն)։ Լաուսոնին պատասխանելով, կաշխատեմ զսպել ինձ ամենայն տեսակ խիստ քննութիւններ անելուց ի պատիւ ստիպողական պատճառների, թէև ես բոլորովին համաձայն չեմ համարեա նորա բոլոր տղտարարութեանց հետ։

Ես պէտք է բողոքեմ պատմական սխալների դէմ, որ գործում է հասարակաց կարծիքը։ Ատենաբանը ասաց թէ մենք լուղ ենք տալիս քամու և գետի ընթացքի շնորհիւ դէպի պատերազմը Եգիպտոսում, ինչպէս որ այդ պատահեցաւ Խրիմու պատերազմի ժամանակ։ Ատենաբանի յայտնած այդ խօսքից ոչինչ աւելի անճիշտ լինել չէ կարող և նմանապէս անճիշդ են և ուրիշների կարծիքը վերաբերութեամբ ներկայ հանգամանքների։ Այդ խօսքի պատմութիւնը վերաբերութեամբ Ղրիմու պատերազմի Հետևեալն էր՝ այն րոպէին երբ թշնամական գործողութիւնք պատրաստ էին ծագելու, երբ դեսպանագիտական յարաբերութիւնք դադարեցան և տէրութեան բոլոր ոյժերը պատերազմի առաջն առնելու համար ուշնայն դարձան, Լօրդ Կլարենդրն եւսմիկ դրութիւնը ներկայացնելով, աւելացրեց «Մենք լուղ ենք տալիս քամու և գետի ընթացքի շնորհիւ դէպի պատերազմը»։ Բայց այս լուղը խստիւ սահմանափակուեցաւ երկու երեք օրով, որ բաժանում էին խաղաղութեան քաղաքականութիւնը պատերազմական քաղաքականութիւնից։ Այդ խօսքը ներկայ ժամանակին չէ վերաբերում։ Այն բոլորը ինչ որ արած է Եգիպտական խնդրոյ մասին, արած է շատ մանրամասն քննութիւններից յետոյ և Նորին մեծութեան տէրութեան լիակատար պատասխանատուութեամբ։

«Իմ յարգելի բարեկամը ասում է որ մեր և Եգիպտոսի մէջ պատերազմ կայ։ Ես համաձայն չեմ սորա հետ։ Մենք ոչ ոքի դէմ չենք մղում պատերազմ։ Մենք արդէն վկայ ենք եղած նմանօրինակ փաստերի։ Տաճկաց նաւատորմիղի կործանումից յետոյ Նաւարինում խօսք անգամ չկար թէ մենք պատերազմ ենք մղում Տաճկաստանի դէմ, և որքան ինձ յայտնի է, այդ ժամանակ Կ. Պօլսում, արիւնահեղ կռուի միջոցին, դեսպանաժողով կար . . . իմ յարգելի բարեկամը հարցնում է թէ ինչ եղաւ Եւրոպական դաշնակցութիւնը։ Նա դեռ շարունակում է իւր գոյութիւնը։ Մենք ոչինչ արած չենք Նորան թուլացնելու համար և մենք Նորանից չենք դուրս եկած... Ասում են թէ մենք չենք հաղորդած թէ ինչու համար ենք կռւում։ Եթէ յաջող րոպէն լինէր մեզ դժուար չէր լինել պատասխանելու։ Սակայն մենք վճռորոշաբար յայտնած ենք թէ կռւում ենք նաւատորմիղին վտանգ չպատճառելու համար, որովհետև հաստատ կերպիւ լսւում էր որ Նորան վտանգ էր սպառնում, հակառակ միւս կողմի հաստատութեանց։ Այս էր մեր անմիջական նպատակը։

Իմ յարգելի բարեկամը յիշում է արդեօք Ադէքսանդրեան կոտորուածքը։ Մի՞թէ Նա մոռացել է, որ այդ յարդի յանցաւորները դեռ չեն պատժուած, թէ գատաստանական քննութիւնը իսկապէս մի ծաղր էր. մըտածմած է արդեօք թէ ինչ ներգործութիւն պէտք է ունենայ այդ յարդը, որ անպատիժ է մնացել, ոչ թէ միայն անգլիացիների այլ և արևելքում բնակուող բոլոր եւրոպացիների անվտանգ կեանքի վերայ։

Իմ յարգելի բարեկամը հարցնում է թէ ինչ կլինէր եթէ գերմանական նաւատորմիղը մտնելով Թէմզա գետի մէջ, պահանջէր գինուորական մինիստրի անկումը։ Կը պատասխանեմ, թէ ի հարկէ մեզ մօտ չի կարող պատահել, որ գինուորական մինիստրը իրան դիկտատոր հրատարակէր և պաշարուած պահէր Նորին Մեծութիւն Թագուհուն։

Ոմբակոծութիւնը թշնամական միջոց չէր եգիպտական ժողովրդի դէմ, այլ սոսկ անձնական պաշտպանութեան գործ էր. դորանից վնաս կրեցին ոչ թէ եգիպտացիք, այլ նոքա որոնք գինուորական բռնութիւն էին մտցրել կամքի դէմ և՝ ի վնաս եգիպտական ժողովրդի շահերի։»

ՖԷԼԻԷՏՕՆ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պատմական տեսութիւն)։

IV.

Իտալիայի և մանաւանդ Ֆրանսիայի մէջ կրթուած քանի մի ուսումնական հայ երիտասարդներ չիսունական թուականներն սկզբներում վերադարձել էին Պոլիս և մեծ եռանդով ցանկանում էին ծառայել ազգին։ „Հայաստան“ լրագրի անմխիթար վախճանը, որի մասին արդէն յիշեցինք, պատճառ եղաւ որ նոցա ձեռքով 1852 թուին յանկարծ երկու լրագիր ստեղծուեցան Պոլսում։ Մէկը „Նոյեան Աղաւնի“ անունով քաղաքական մի շաբաթաթերթ էր և խմբագրւում էր պ. պ. Գրիգոր Մարկոսեան և Սահակ Ապօ ուսումնասէր երիտասարդների ձեռքով։ Երկուսն էլ տաճկաց Բարձրագոյն Դրանը Թարգմանի պաշտօն էին վարում և միջոց ունէին նորանոր լուսերով շատ կենդանութիւն տալ իրանց թերթին։ Պատատական Թղթակցութեանց առատութիւնն էլ աւելի հետաքրքիր էր անում այդ լրագիրը։ Բայց օդուտ քաղելով իրանց անկախ դիրքից, երիտասարդ խմբագիրները պատրիարքարանի և ազգային վարչութեան դէմ կամեցան ընդդի-

մաղթական դէր խաղալ և.... „Նոյեան աղաւնին“ մեկ տարուանից չետոյ լռեց: Բոլորովին հակառակ ուղղութեամբ սկսեց նոյն 1852 թուին իւր „Մասիսը“ պ. Կ. Իւթիւճեանը, որ, այդ ժամանակ նոր ապրած իւր կրթութիւնը Ֆրանսիայում, վերադարձած էր Պոլիս: Պաշտպանողական դիրք բռնելով թէ պատրիարքարանի և ազգային վարչութեան վերաբերութեամբ և նոյն իսկ Օսմանեան տէրութեան, հանդամանքի „Մասիսը“ մինչև այսօր էլ շարունակելով, հաւատարիմ է մնացած իւր սկզբնական ուղղութեանը: Բաւական է ասել, որ այս երեսուն տարուայ մէջքում, երբ Տաճկաստանի մէջ այնքան քաղաքական փոփոխութիւններ են պատահել՝ գահակալների, մեծ վէզիրների, նախարարների, դեսպանների, նաև մեր պատրիարքների, այնքան մեծամեծ պատերազմներ, արևնհեղութիւններ, ապստամբութիւններ և այլն „Մասիսը“ անեղայն իշխանութեան բարեհամ և հաճելի է մնացել և մինչ լրագիր չէ եղած Օսմանեան պետութեան մէջ որ չը յանգիմանուէր, բանտարկուէր ու դադարէր, Մասիսը միմիայն մի անգամ անցեալ տարի քանի մի օրով դադարեցուց և այն տաճկի պաշտօնէից սխալ հասկացողութեան պատճառով: Մուս կողմից՝ այս երեսուն տարուայ մէջ տակաւին Տաճկաստանում և ոչ մի հայ լրագիր է ծնած, որ Մասիսից աւելի բարձր վինէը կանգնած որ և իցէ արժանաւորութեամբ, չենք ասում նորա մեծամեծ ծառայութիւնները լեզուի պահպանութեան վերաբերութեամբ:

„Մասիսի“ հանդէս գալուց չետոյ մինչև վերջին տարիները Տաճկաստանի մէջ ուրիշ քաղաքական լրագիր չը հրատարակուեցաւ, բայց բանասիրական ամսագրերի և թերթերի վրայինը անպակաս էին: Այդպէս ահա 1853 թուին Զմիւռնիայի մէջ Տէտէեան երեք եղբայրները, մի ընդարձակ տպարան հաստատելով, հրատարակեցին „Արփի Արարատեան“ անունով ամսագիրը, որ մեծ մասամբ եւրոպական վիպասանութեանց թարգմանութիւններ էր բովանդակում իւր մէջ և ընդամէնը երկու տարի շարունակուեց: Նոյն 1853 թուին զադարած „Հայաստան“ լրագրի խմբագիր Զամուրճեան պատուէրն կամենալով շարունակել քաղաքականաց դէմ պատերազմը և զգուշացնել մեանիտ հայ ժողովուրդը, սկսեց „Զօհաւ“ անունով հայ տառերով և տաճկերէն լեզուով ամսագրի հրատարակութիւնը, որ 1857 թուին լեզուն հատցնելուն զարձնելով կոչեց „Նրևակ“ ու շարունակից մինչև 1865-ը: Յետագայ 1854 թուին Պոլսոյ մէջ նոր ստեղծուած „Ազգասիրական“ անունով ընկերութիւնը կամեցաւ ընտանեկան ընթերցանութեան համար մի բանասիրական ամսագիր հրատարակել „Ընտանի Խմաստասէր“ անունով, բայց այս գործը նոյն տարին դադարեց: Այն ժամանակ Պոլսոյ „Մեսրովբեան“ անունով ընկերութիւնը 1855 թուին սկսեց „Աստղիկ Արևելեան“ բարոյական, բանասիրական, տնտեսական և բնական դիտելեաց ամսաթերթը: Սա ևս մի տարի հազիւ շարունակուեց: Նոյն 1855 թուին Խրիմեան Հայրիկը իւր „Արծուի Վաղարշապատական“ ամսաթերթը սկսեց Պոլսում, ուր երկու տարի շարունակելուց չետոյ, երբ ինքը 1857 թուին Դպրեվայ վանից առաջնորդ դարձաւ, այնտեղ տպարան հաստատեց և շարունակեց իւր ամսագիրը մինչև 1862 թուականը: Վերջապէս նոյն 1855 թուին կաթոլիկութիւնից մայրենի եկեղեցու դիրքը զարձած երից վարդապետաց (Ս. Թէոդորեան, Գ. Այվազեան և Ա. Դալփայեան) հեռագրով Փարիզում սկսեցան „Մասեաց Աղաւնի“ պատերազմական թերթերը, որ չետոյ 1859 թուին փոխադրուեցաւ Թէոդոսիայ և, մինչև 1865 թուականը շարունակուելով, զադարեց:

Յետագայ 1856 թուին Պոլսոյ մէջ լոյս տեսաւ „Զուարճախաւսութեան“ անունով մի թերթ և կարճատեայ կեանք վայելելուց չետոյ անհետացաւ:

1857 թուին վերև յիշածներից վերջ աւելացաւ „Մուսայք Մասեաց“ անունով ամիսը երկու անգամ հրատարակուող թերթը, որ միայն թատրոնական գրուածների թարգմանութիւններ էր բովանդակում և ընդամէնը մի տարի շարունակուեց:

1858 թիւը նշանաւոր էր գլխաւորապէս ռուսահայոց համար: Այսուհետև մինչև թուականի տարեդարձից Թիֆլիսում սկսեց „Մեղու Հայաստանեայ“ լրագրի հրատարակութիւնը հանգուցեալ Հ. Ս. Մանդինեանի խմբագրութեամբ, որ և շարունակվում է մինչև այսօր պ. Պ. Սիմէօնեանցի ձեռքով, իսկ Մոսկուայում լոյս տեսաւ „Հիւսիսափայլ“ անունով ամսագիրը հանգուցեալ Ս. Նազարեանցի խմբագրութեամբ և շարունակուեց ընդամէնը վեց տարի (1858—1862, 18 4):

1859 թուին Մոսկուայում լոյս տեսաւ հանգուցեալ Մ. Մաղաքեանի ձեռքով „Ձուարճարար“ ամսագիրը, Պոլսում նոյնգոլեց պ. Հիսարլեանի „Բանասէրը“, „Մուսեաց աղաւնին“ լինչպէս ասացինք, Փարիզից տեղափոխուեց Թէոդոսիայ, իսկ Փարիզում Զմիւռնեցի Սահակ Ոսկանեանի ձեռքով միասին սկսեցան „Արևելք“ և Արևմուտք“ հանդէսները, բայց առաջինը երկրորդ, թէ երկրորդ համարի վերայ զադարեց, իսկ երկրորդը քանի մի ամսուանից չետոյ: Վերջապէս նոյն թուին Պոլսոյ մէջ հանգուցեալ Յարութիւն Սրվանձեանի խմբագրութեամբ հրատարակուեցաւ „Մեղու“ անունով կիսամսեայ հանդէսը: Այս թերթը, որ իւր ժամանակին սարսափ էր ընծայում մեղաւորներին և անչափ գուարճացնում էր արդարներին, առաջինը եղաւ Հայոց մէջ, որ գործ դրեց ճիւաղական պատկերները ու անխնայ հարուածեց հասարակական գծծուներուն անհատների պակասութիւնները, մինչև այն աստիճան, որ քանի մի անգամ մատնուեցաւ

V

Վաթսունական թուականների սկիզբները զարմանալի առատութիւն տուին հայ պարբերական մամուլին: Անոպասելի արագութեամբ սիմեանց հետից հանդէս էին գալիս հայոց պարբերական թերթերը և նոյն արագութեամբ անհետանում: Այնքան անկանոն և անորոշ էին այդ հրատարակութիւնները, որ հազիւ թէ ով և իցէ հայ մատենագէտներից կարող լինէը ճիշդ հաշիւ պահել թէ որ թերթից քանի համար լոյս աշխարհ տեսաւ: Շարունակելով մեր խօսքը, պիտի յիշենք, որ 1860 թուին աւելացան մեզ հօթը պարբերական հանդէսները, այն է՝ Պոլսոյ մէջ՝ պ. Գ. Տէրվիմէնճեանի խմբագրութեամբ „Արևելեան դար“, պ. Ա. Ճէլալեանի խմբագրութեամբ „Սէր“ և պ. Հ. Ալաճաճեանի աշխատութեամբ „Փունջ“ և առանձին „Փունջիկ“:

Զմիւռնիայի մէջ պ. Հիւսէյնճեանի աշխատութեամբ „Թուրք Հայաստան աշխարհ“ հրատարակուեցաւ թերթը, որի միայն երկու երեք համարները լոյս տեսան: Ինչպէս պատմում են այդ պ. Հիւսէյնճեանը այն միջոցում մի դերահաս պատանի էր, որ մի հայ տպարանի մէջ դրաշարի պաշտօն էր կատարում: Սատիկ ցանկութիւն ունենալով թերթ հրատարակելու, այդ պարոնը իւր գրած յօդուածները ինքը շարում էր, ինքը սրբագրում և, տպելուց չետոյ,

ինքը ցրվում քաղաքի մէջ ունեցած քանի մի բաժանորդներին:

Վերջապէս նոյն տարին, ինչպէս վերևը յիշեցինք, Ֆրանսիայի մայրաքաղաքում պ. Ա. Մուրատեանի ձեռքով լոյս տեսաւ և երեք տարի շարունակուեց „Փարիզ“ լրագիրը: Բայց ամենից նշանաւոր և ուշադրութեան արժանի հրատարակութիւնը, որ սկսուեցաւ 1860 թուին, դա „Կռունկ հայոց աշխարհի“ ամսագիրն է, որ խմբագրւում էր Թիֆլիսում պ. Մարկոս Աղաբէգեանի ձեռքով և շարունակուեց չորս տարի, ազգիս պատմութեան և լեզուի վերաբերութեամբ բաւականին առատ նիւթեր ըովանդակելով իւր մէջ:

Հետևեալ 1861 թուին մինչ Ռուսաստանի հայոց հրատարակութիւնը աւելացաւ միայն Մոսկուայում պ. Զ. Մսերեանի ձեռքով խմբագրած „Համբաւաբեր Ռուսիոց“ թերթը, Զմիւռնիայում պ. Ս. Վանանդեցւոյ և քանի մի ուսումնասէր երիտասարդաց օգնութեամբ հրատարակուեցաւ „Մխուիթիւն Հաշտենից“ հանդէսը, որ մօտ 1½ տարի տևեց: Այդ թուին Պօլսոյ մէջ երևացին Թռչնիկ ամսագիրը, „Կիլիկիա“ բժշկական—առողջապահական թերթը, որ խմբագրում էր Տաճկաց պինուորական բժշկանոցի մէջ դեռ ուսանող պ. Խրիմեանը, պ. Այվազեանի ձեռքով „Մամուլ“ թերթը և մի տիկնոջ Ե. Կ. Տ. Հայկուհի ստորագրութեամբ խմբագրած „Կիթառ“ հանդէսը, որ գլխաւորապէս օրիորդների և առհասարակ իգական սեռի համար էր յօրինուած, բայց 7-երորդ համարի վերայ դադարեց:

1862 թուին կարճ օրուայ համար սկսուեցան և մեծ մասամբ նոյն տարին հանգան հետևեալ թերթերը: Պօլսոյ մէջ՝ „Մուսայք Մասեաց“ հանդուցեալ Աբմենակ Հայկունւոյ խմբագրած թատրոնական ամսագիրը, „Վարդ“ անունով թերթիկը Ս. Բարսեղեանի և Թ. Պէհեանցի ձեռքով և վերջապէս պ. Գալեմաճեանի խմբագրութեամբ „Զեվիւռ Հայրենեաց“ հանդէսը: Իսկ Զմիւռնիայի մէջ երեւան եկան պ. Գ. Պարտիզպանեանի ձեռքով „Գաբռն Հայաստանի“ կիսամսեայ թերթը, և պ. Գ. Չիլինկիրեանի խմբագրութեամբ „Ծաղիկ“ հանդէսը, որ երկու տարի շարունակուեց: Բացի այդ, նշանաւոր էր այն իրողութիւնը, որ յիշեալ 1862 թուին Զմիւռնիայի մէջ յանկարծ երևեցան երեք երկիծաբան և ծաղրածու թերթեր՝ „Ափերգ ափերգ“ պ. Տէտէեանի խմբագրութեամբ (միայն երկու համար), „Դիմակ“ դարձեալ պ. Տէտէեանի ձեռքով (26 համար) և „Յաւերժահարս“ պ. Ստեփանոս Փափազեանի (Տէր-Կարապետեանի) ձեռքով քանի մի համար: Վերջինս իբր թէ ընտանեկան ընթերցանութեան համար էր, բայց և դորա պագարման պատճառը Զմիւռնիայի հայ ընտանեաց բողոքն եղաւ: Բանն այն է, որ Յաւերժահարսը շատ բաժանորդներ դտնելու մտքով ամեն համարի մէջ հրատարակում էր թէ այն շաբաթ ով որի հետ պատահեց, որի կինը ամուսնութիւնից քանի ժամանակ անցած ծնեց և ծնածը աղջիկ էր թէ տղայ: Զմիւռնիացիք անյարմար գտան ընտանեկան այդպիսի հաշիւները հրապարակաւ պահել, մանաւանդ որ այդ ճանապարհով այլևս անհնարելի պիտի լինէր հարևնացու օրիորդների տարիքը սակաւ ցոյց տալու: Աղջիկ զաւակներ ունեցող տիկնայք ընդհանուր բողոքով, ինչպէս տեսանենք, կարողացան դադարեցնել Յաւերժահարս թերթը, բայց և իրաւունք տալն մեզ հայ լրագրութեան պատմութեան մէջ մտցնելու այդ երևոյթը:

Հետագայ 1863 թուին զմիւռնիացւոց եռանդը նորանոր հանդէսներ սաղմնելու մասին սառաւ, բայց պօլսեցիք շարունակում էին գործել: Տաճկաստանի մայրաքաղաքում այդ թուականին երևեցան՝ պ. Գ. Ալամճեանի խմբագրութեամբ „Թռչնիկ Պեգասեան“, որ քանի մի համար տալով դադարեց, պ. Ս. Փափազեանի ձեռքով „Ժամանակ“ շաբաթաթերթը, որ քանի մի տարի շարունակուեց և կեսարացի Մարտիրոս քահանայ Նիկողոսեանի ձեռքով „Վարդ Կեսարիոյ“ սակաւօրեայ թերթը: Վերջապէս նոյն թուականի վերջերին, Հայաստանի խորքերում, Մուշի մէջ, Հ. Գաբրիէլեան (այժմ վարդապետ) Սրուանձտեանը, որ Խրիմեան Հայրիկի յառաջադէմ աշակերտն էր, սկսեց „Արծուիկ Տարօնոյ“ թերթիկը, բայց, զանազան խոչնդոտների պատճառով դադարեց տարին հազիւ լրացնելով:

1864 թուին պօլսեցւոց եռանդն էլ սառեց, բայց այդ մայրաքաղաքից դուրս չորս նորանոր հանդէսներ յառաջ եկան: 1) Հանդուցեալ Կարապետ վարդապետ Շահնազարեանը, որ Անգղիայում գտնուող հայ վաճառականների համար Մանչեստերի մէջ մի մատուռ էր կառուցել, սկսեց այտեղ „Երկրագունդ“ հանդէսը, որ երկարակեաց չեղաւ: 2. Պետերբուրգում մեր բանաստեղծ Գամառ-Քաթիպան (պ. Ռափայէլ Պատկանեանը) խմբագրում էր „Հիւսիս“ շաբաթաթերթը, բայց սա էլ տարին չը լրացրեց: 3. Թիֆլիսի մէջ պ. Ստեփաննոս Ստեփանին (այժմ վարդապետ) կամեցաւ նախ շարունակել պ. Մ. Աղաբէկեանի „Կռունկ ամսագիրը“ „Հայկական աշխարհի Կռունկ“ անունը տալով դորան, բայց յետագայ տարիքում թողեց միայն „Հայկական աշխարհ“ անունը: Այս ամսագիրը սկսուելով 1864 թուի վերջերին և ամեն խոչնդոտների դիմանալով մինչ և շարունակուեց մօտ 14 տարի, բայց իւր թափառական կեանքով միայնակ օրինակը եղաւ հայ մամուլի պատմութեան մէջ: Սկսուելով Թիֆլիս, դա անցաւ Շուշի (1874 թ.), ապա նորից Թիֆլիս (1876 թ.), այս տեղից Բագու (1878 թ.) և վերջապէս Էջմիածին (1879): Եւ 4. Զմիւռնիայի մէջ պ. Ագճալեանը կարճ օրուայ համար հանդէս հանեց „Վոսփոր“ կիսամսեայ հանդէսը:

Նիկոմիդիացի պ. Աբրահամ Մուրատեանը, որ դեռևս 1850 թուին իւր հայրենիքում հրատարակում էր, ինչպէս տեսանենք „Հայրենասէրը“, ապա 1860—1862 թ. Փարիզում „Փարիզ“ լրագիրը, այս անգամ տեղափոխուած Եգիպտոս՝ 1865 թուին Կայիրօյի մէջ սկսեց „Արմաւենի“ հանդէսը, բայց առաջուանիներից անյաջող:

1866 թուին Կռունկի նախկին խմբագիր պ. Մարկոս Աղաբէկեանը Պօլսոյ մէջ՝ սկսեց „Մելն Աւարայր“ ամսագիրը, որ 1½ տարի շարունակուելով, շատ հետաքրքիր տեղեկութիւններ հրատարակեց մանաւանդ ազգիս նորագոյն պատմութեան վերաբերութեամբ: Նոյն տարին Պօլսոյ մէջ լոյս տեսաւ նմանապէս „Մեամանե“ հանդէսը: Թիֆլիսի մէջ Մեղու-Հայաստանեայ նախկին խմբագիր Ստեփաննոս քահանայ Մանդինեանցը հրատարակեց „Գարուն“ ամսագիրը, բայց վեց համար տալով դադարեց, իսկ պ. Դ. Տէր-Աղեքսանդրեանի խմբագրութեամբ հրատարակուեցաւ „Վաճառական“ առևտրական թերթիկը, որ 1½ տարի շարունակուեց: Վերջապէս Երուսաղէմում Յակոբեանց հայ միաբանութիւնը սկսեց Սիօն ամսագրի խմբագրութիւնը և շարունակեց տասն և երկու տարի (1878 թիւը):

1867 թուին մեր պարբերական մամուլին նոր թերթ չաւելացաւ, եթէ չը յիշենք „Մասիսի“ յաւելուած „Մասիսօրեայ թերթ“ անունով ամենօրեայ թերթիկը:

Բայց 1868 թուին ունեցանք երեք նորանոր հանդէսներ՝ Էջմիածնայ միաբանութիւնը սկսեց „Արարատ“ ամսագիրը, որ մինչև այսօր էլ շարունակւում է, Պօլսոյ մէջ Գ. Թ. Թերզեանի խմբագրութեամբ սկսուեց „Բիւզանդիոն“ թատ-

բանական Հանդէսը և վերջապէս Զմիւռնիայի մէջ պ. Սարգիս Մերսոյի համբաւաբերութեամբ լոյս տեսաւ „Ի ր ա ւ ո ւ ն ք“ անունով երեսաբանական մասնագիտական թերթը: Վերջինն երկուսը յաջտեւ չեղան:

Հետագայ 1869 Թուին Արմաշի վանքում սկիզբն առաւ „Յոյս“ ամսագիրը, իսկ Պօլսոյ մէջ պ. Այվազեանի համբաւաբերութեամբ „Ա ր ա ր ա տ“, պ. Ֆէլէկեանի ձեռքով „Ե ւ փ ր ա տ“ և պ. Օգսէն Խոճասարեանի ձեռքով „Օ ր ա գ ի ր“ թերթերը սկսուեցան:

VI

Եղեռնասնեական թուականները վաթսունականների համեմատութեամբ առատ չեն նորանոր հանդէսներով: Նախ չենք, որ 1869 Թուից շաբաթական մեր պարբերական թերթերը էին՝ Պօլսոյ մէջ՝ ա մ ե ն օ ր ե ա յ „Արարատ“, „Մշակ“, „Մասիս„, „Փունջ“ և „Օրագիր“ թերթերը, եռօրեայ „Ժ ա մ ա ն ա կ“ լրագիրը, շ ա բ ա թ ա կ ա ն „Աւետաբեր“, „Ե ւ փ ր ա տ“, և „Մ ա մ ո ւ լ“ թերթերը: Արմաշու վանքում „Յոյս“ տասնօրեայ, Երուսաղէմում „Սիօն“ ամսագիրը, Վենետիկում՝ „Բ ա զ մ ա վ է պ“ կիսամսեայ հանդէսը, Զմիւռնիայում „Ա ր շ ա լ ո յ ս Ա ր ա ր ա տ ե ա ն ը“ կիսամսեայ, էջմիածնում „Ա ր ա ր ա տ“ ամսագիրը, Թիֆլիսում „Մեղու Հայաստանի“ շաբաթաթերթը և „Հայկական աշխարհ“ ամսագիրը: Ընդամէնը 16 հատ հայ պարբերական հանդէս:

Դարս վերայ 1870 Թուին աւելացան Պօլսում՝ „Փ ա ր ա“ շաբաթաթերթը պ. Հ. Իւթիւճեանի համբաւաբերութեամբ, „Հ ո ր ի զ ո ն“ երկօրեայ հանդէսը պ. Գ. Լազեանի համբաւաբերութեամբ, „Հ ա յ ե ն ի ք“ շաբաթական պ. Ա. Վարպետեանի համբաւաբերութեամբ, „Փ ո ղ ա ռ ա ւ օ տ ե ա ն“ երկօրեայ պ. Յ. Պարոնեանի ձեռքով, „Մ ե ղ ու“ եռօրեայ և „Ե ր կ ր ա գ ո ւ ն դ“ շաբաթական Նուպար—Շահինպաշեան դպրոցի տաների ձեռքով: Իսկ անցեալ տարուան լրագիրներից պահպանեցան պ. Այվազեանի „Արարատը“, „Եփրատը“ և «Ժամանակը:

Հետագայ 1871 Թուին Պօլսոյ մէջ նորից սկսուեց մի այլ անձի համբաւաբերութեամբ „Ա ր ա ր ա տ“ հանդէսը, իսկ Զմիւռնիայում հասատատուեց պ. Մատթէոս Մամուրեանի համբաւաբերութեամբ „Ա ր և ե լ ե ա ն Մ ա մ ո ւ լ“ ամսագիրը, որ մինչև հիմայ էլ շարունակվում է և մինչև այսօր Տաճկաստանի մէջ հրատարակուած գիտական և բանասիրական ամսագրերից ամենաերկարն է իւր բովանդակութեամբ:

1872 Թուին Պօլսոյ մէջ լոյս տեսան՝ „Ա ս ի ա“ անունով թերթը և բողոքականաց ձեռքով „Ա ւ ե տ ա ր ե ր“ եւ ըե խայոց համար պատկերաղարդ ամսաթերթը, որ մինչև հիմայ էլ շարունակվում է և տարեկան արժէ 50 կոպ: Միևնոյն տարին պ. Խաչիկեանի ձեռքով Թէոդոսիայում հիմնուեց „Դ ա ս տ ի ա ր ա կ“ անունով մանկավարժական թերթը, բայց անյաջող եղաւ: Վերջապէս նոյն Թուին Թիֆլիսի մէջ պ. Գրիգոր Արծրունեայ ձեռքով սկսուեցաւ „Մ շ ա կ“ լրագիրը, որ նախ շաբաթական էր և յետոյ ամենօրեայ դառնալով մինչև հիմայ շարունակվում է:

Այս վերջին տասը տարուայ մէջ, այսինքն 1872-ից մինչև ներկայ Թուականը լոյս տեսան հետագայ հանդէսները: 1) Պօլսում՝ „Թ ա տ ր ո ն“ գաւեշտական թերթը պ. Յ. Պարոնեանի համբաւաբերութեամբ, „Լ ո յ ս“ կիսակրօնական, կիսաբանասիրական թերթը Հ. Հմայեակ Վ. Դիմաքսեանի ձեռքով, „Ն ո ր ա գ ի ր“ և „Լ ր ա գ ի ր“ այժմ դադարած թերթերը: 2) Զմիւռնիայի մէջ պ. Գրիգոր Մսերեանի համբաւաբերութեամբ „Մ է տ է օ ր ա յ“ գիտական (գիտնական), ազգային և գրական հրատարակութիւնը, որ 1880 Թուին սկսուելով, տակաւին երկու դիրք է հանդէս հանել: 3) Էջմիածնում Հ. Վահան Վ. Բաստամեանի ձեռքով „Պ ա յ ծ“ մանկավարժական ամսագիրը: 4) Երևանում պ. Բաբաջանեանի համբաւաբերութեամբ „Պ ա տ ա կ“ լրագիրը և պ. բժիշկ Լևոն Տիգրանեանի ձեռքով „Ա ռ ո ղ ջ ա պ ա հ ա կ ա ն թ ե ր թ“ ամսագիրը, 5) Թիֆլիսում պ. Աբգար Յովհաննիսեանի ձեռքով „Փ ո ր ձ ը“, պ. Յ. Տէր-Յովհաննիսեանի ձեռքով „Մ ա ն կ ա վ ա ր ժ ա կ ա ն թ ե ր թ“ ամսագիրը, որ մինչ տարի շարունակելով դադարեց և „Ա շ խ ա տ ա ն ք“ կիսահայերէն—կիսառուսերէն շաբաթաթերթը պ. Մելքիսեդեկեանի համբաւաբերութեամբ, որ 12-րդ համարի վերայ դադարեց. 6) Մոսկուայում „Փ ա ր ա ս“ անունով հրատարակութիւնը, որ նախ պ. Զ. Մսերեանի ձեռքով տարեկան մի տետրակ էր դուրս գալիս, ապա վերջին 1881 Թուին տեղին Մսերեանի համբաւաբերութեամբ երկու ամիսը մի անգամ պատկերազարդ էր հրատարակվում և ընտանիքներում կարդալու համար շատ յարմարութիւններ կարող էր ունենալ:

Առ այժմ այստեղ դադարեցնելով մեր տեսութիւնը պիտի չենք՝ նախ որ եղած են, որքան գիտենք, քանի մի հայերէն պարբերական հրատարակութիւններ, ինչպէս Կալկաթայում „Հ ա յ ե լ“ հանդէսը, և Տաճկաստանում՝ „Մ օ դ ա“, „Մ ո ւ շ ի կ“, „Ձ ե մ ա ր ա ն գ ի տ ե լ ա ց“, „Տ ի ե զ ե ր ք Հ ա ն դ է ս ք ը օ ս ո ւ ա վ ա յ ց“ և այլք, որոնց տեղը, ժամանակը և մեւս հանգամանքները մեզ յայտնի չեն: Երկրորդ՝ պիտի խոստովանենք, որ վերջին երկու տասուայ մէջ Պօլսում երևեցած մի քանի նոր հանդէսները՝ ինչպէս „Վ ա յ ե լ“ անունով մօդային շաբաթաթերթը, „Ռ ն ա ք“ երաժշտական թերթը և մեւսները այս չօդուտաճիս մէջ չը մտան, և դրա մի այլ տեսութեան մնացին: Երորդ՝ չկարեցան նմանապէս 1861—1862 Թուերին Պօլսոյ մէջ հանդուցեալ Դ. Երանեանի և պ. Տիգրան Զուխաճեանի „Ռնաբ Հայկական“ երաժշտական թերթը, ինչպէս և կիսահայերէն և կիսատաճկերէն „Օսմանեան երաժշտութիւն“ երաժշտական ամսաթերթը, որ սկսուեց Պօլսում 1863 Թուին պ. պ. Վ. Փափազեանի և Տ. Զուլաճեանի համբաւաբերութեամբ: Եւ չորրորդ՝ մենք միայն մասնաւոր կերպիս չկարենք քանի մի թերթերի անունները, որոնք Տաճկաստանում հայոց ձեռքով և հայոց համար՝ տարագրուել են հայերէն տառերով, բայց տաճկերէն լեզուաւ: Այժմ կը աւելացնենք որ այդ թերթերը, որքան մեզ յայտնի է, ընդամէնը տասն և երեք հատ են եղած, այն է՝ 1832 Թուին հանդէս եկաւ „Թագւիմ վագայէ“ (Պօլիս), 1840 Թ. „Ձերբեակեցի Հաւատոյ“ (Պօլիս), 1852 Թ. „Մկճմուայը Հավատոյ“ (Պօլիս), 1853 Թ. „Զօհալ“ (Պօլիս), 1855 Թ. „Ախտապէս Թօսթանդանէ“ (Պօլիս), 1859 Թ. Մխնաթիւ էրբհյաս“ (Պօլիս), 1866 Թ. „Մանդումէկ էֆքեար“ (Պօլիս), 1867 Թ. էվրագը շարդըյէ“ (Կարին), 1867 Թ. „Ֆռավէ“ (Հալէպ), 1868 Թ. „Թռչնիկ“, տաճկերէն (Պօլիս), 1868 Թ. Վարագայէ Հաւատոյ“ (Պօլիս), 1869 Թ. „Խիւտավէնկեար“ (Պրուսա) և 1870 Թ. „Սեհատյը Հագըգաթ“ (Պօլիս):

Աւելորդ չէ նաև յիշել, որ մեր ձեռքը հասած են քանի մի յայտարարութիւնները այնպիսի հանդէսների մասին, որ չեսոյ չեն երեսդրծուել այսինքն ամենևին չեն լոյս տեսել. օրինակ 1860 Թուին Զամուրճեան պատուելին մտադիր էր Պօլսում հրատարակել Revue arménienne գաղղիերէն Թերթը, 1861 Թ. պ. Խ. Մխաքեանը փարիզում յայտարարեց „Ծաղկոցաձոյ“ հանդիսի մասին, նոյն 1861-ին հանգուցեալ Մ. Պէշիքթաշլեանը, պ. Սրապիոն Հէքիմեանը և պ. Կ. Գաբագաշեանը ընկերութեամբ խոստացան „Յոյս“ անունով կիսամսեայ Թերթը և այլն: Վերջինիս լոյս տեսնելուն արգելք եղաւ տաճկաց տէրութիւնը:

Այդպէս ահա 1795 թուէն, այսինքն այն օրէն, երբ հայոց մէջ առաջին պարբերական հրատարակութիւնը երևաց, մինչև այսօր, այս 86 տարուայ մէջ մենք ունեցել ենք, համեմատ մեր ձեռք բերած տեղեկութիւնների, 132 պարբերական հանդէս: Մանրամասնապէս առնելով՝

1795-ից—1840	այսինքն 45 տար. մէջ	երևան են եկել	7 հան.
1840-ից—1850	այսինքն 10 տար. մէջ	„ „	14 „
1850-ից—1860	„ „ „	„ „	28 „
1860-ից—1870	„ „ „	„ „	49 „
1870-ից—1882	„ „ „	„ „	34 „

Ուրեմն մինչդեռ 1840 թուից սկսած ամէն տասը տարուայ մէջ նորանոր հանդէսների թիւը կրկնապատկում էր, 1870 թուից այս կողմը այդ աստիճան շատ չեն նոր թերթերը: Այս երևոյթը մեզ մխիթարական է թւում, որովհետև երբ որ Տաճկաստանում մանաւանդ 1860-ից մինչև 1872-ը այն աստիճան խաղալիք էր դարձել պարբերական թերթ հրատարակելը, որ ամէն գպրոցի աշակերտ, ամէն մի անպատրաստ անձը կամենում էր խմբագիր դառնալ: Այդ բազմաթիւ հանդէսներից շատերը եթէ օր առաջ մեռան, ցոյց է տալիս, որ մեր կարդացող հասարակութեան մէջ ճաշակ կայ, ընտրութիւն կայ: Այդ մեռածներից մի քանիսը շատ համակրելի էին, բայց մեծամասնութեան մահը միայն ուրախութիւն կարող է պատճառել, որովհետև գոքա զրզռացրել էին կարդացողներին: Բանը այն տեղն էր հասել, որ Պօլսում 1874 թուին Գ. Պաղտասարեանի տպած օրացոյցի մէջ այս խրատը կայ „աղգիս մէջ շատ գրքեր ու լրագիրներ „ կը տպուին, որոնք գիտեն մարդս երբ կը լուսաւորեն—երբ „ որ անոնց թուղթերովն սեղեակին աղտոտ ապակիները „ մաքրենք“ (եր. 125): Եթէ այս տգեղ խօսքերը ուղղուած լինէին դէպի քանի մի հանդած թերթերը, շատ իրաւացի պիտի համարէինք:

Եթէ այդ 132 հանդէսները բաժանէինք տէրութեանց և քաղաքների վերայ, կը տեսնենք, որ

Տաճկաստանի	11 քաղաքներում դուրս են եկել	„	89 հանդ.
Ռուսաստանի	8 „ „	„	22 „
Հնդկաստանի	3 „ „	„	4 „
Եւ Արևմտեան Եւրոպայի	4 „ „	„	12 „
Անյայտ տեղերը	„ „	„	5 „

Քաղաքներից առաջին տեղը բռնում է Պօլիս, ուր երևացել են 65 թերթ, յետոյ Զմիւռնիա—15, Թիֆլիս—11, Վենետիկ—5, Մոսկուա—4, Փարիզ—4, Էջմիածին—3, Վիեննա—2, Երևան—2, Թէոդոսիա—2, Կալկաթա—2, այնուհետև Մադրաս, Սինկափուր, Մանչեստեր, Պետերբուրգ, Բագու, Շուշի, Երուսաղէմ, Արմաշ, Վան, Մուշ, Կարին, Հալէպ, Նիկոմիդիա, Պրուսա, և Կայիրօ—մէկ մէկ:

Ըստ բովանդակութեան վերոյիշեալ 132 թերթերից եղել են՝ լրագիր—48 հատը, ամսագիր—29, խառն բովանդակութեամբ—30, գրաբարեան—7, երկբարեան—4, մանկավարժական—3, թատրոնական—3, բժշկական կամ առողջապահական—2, ընտանեկան ընթերցանութեան համար—1, կանանց համար—1, մօդաների (նորաձևութեանց) վերաբերեալ 2, երեխայից համար—1, երաժշտական—1:

Պէտք է նկատել, որ 7 գրաբարեան, 4 երաժշտական, 3 թատրոնական և 2 մօդաների հանդէսները, բոլորն էլ տաճկահայոց մէջ են ծնել, իսկ 3 մանկավարժական հանդէսները—բոլորն էլ ռուսահայոց մէջ: Առողջապահական թերթերից մէկը պատկանում է Տաճկաստանին, միւսը Ռուսաստանին:

Ներկայումս չարունակող հանդէսներից՝

Զմիւռնիայի Աբշալոյս Աբարատեանը այժմ է 42 տարեկ.

Վենետիկի Բազմավէպը	. . . . .	39 „
Պօլսոյ Ազետարերը (բողոքականաց)	. . . .	37 „
Պօլսոյ Մասիս լրագիրը	. . . . .	30 „
Թիֆլիսի Մեղու Հայաստանին	. . . . .	24 և այլն:

Այս ամենաերկարատևները չիշելուց յետոյ, պէտք է ասենք, որ մեր բոլոր պարբերական հանդէսների կեանքը միջին հաշուով հազիւ թէ $2\frac{1}{2}$—6 տարի: Ամենակարճատևը եղել են մանրագիտականները, ապա ամսագրերը, յետոյ խառը բովանդակութեան և վերջապէս համեմատաբար ամենաերկայնատևացքն են լրագրերը:

Վերոյիշեալ 132 հանդէսները հրատարակուած են վանքերի ձեռքով 10 հատ (3-ը լուսաւորչական և 7-ը հայկաթոլիկաց վանքերը), 9-ը հայ վարդապետների ձեռքով, 5-ը հայ քահանայից ձեռքով, 4-ը բողոքական քարոզիչների ձեռքով, մնացած 104 հանդէսների խմբագիրները աշխարհական անձինք են եղել: Դարձեալ վերոյիշեալ 132 հանդէսներից՝ երեքը հրատարակուել են ընկերութեանց ձեռքով, երկուսը ուսումնարանների ձեռքով, 3-ը համարուել են Օսմանեան կիսապաշտօնական թերթի, 1-ը Պօլսոյ հայոց պատրիարքարանի կիսապաշտօնական թերթի: Մանրամասնապէս դրամական օգնութիւններ ստացել են Զմիւռնիայի „Աբշալոյսը“ և Թիֆլիսի „Մեղու Հայաստանի“ լրագիրը: Նիւթական պակասութեան պատճառաւ դադարած հանդէսին համակրութեամբ օժանդակութիւն ժողովել և վերականգնացնել թերթը—եղած է մինդամայ (1849 թուին Հնդկաստանում Թաղիադեանի „Աղգասէրի“ համար): Տէրութեան ձեռքով դադարացրած հանդէսի վնասները ծածկելու համար հատարակաց ստորագրութիւն եղած է, որքան մեզ յայտնի է, չորս անգամ (բոլորն էլ Պօլսոյ մէջ վերջին հինգ տարուայ ընթացքում): Առաջին դէպքը հայ խմբագրի բանտարկութեան տէրութեան դէմ ազգային շահերը պաշտպանելու համար եղել է 1861 թուին (պ. Կարապետ Փանոսեանը զէյթունցոց ապստամբութեան ժամանակ): Այնուհետև այդպիսի բանտարկութիւններ եղել են դարձեալ 3: Պաշտօնական կերպիւ դադարացրած են հանդէսները Տաճկաստանում 17 անգամ: Դատի են թարկուած են այնտեղ տէրութեան ձեռքով 6, յանդիմանութիւն ստացած են՝ Ռուսաստանում 1 անգամ (Հիւսիսափայլը 1862-ին), Տաճկաստանում — մեզ ճիշտը անյայտ, բայց խոսափէս շատ և շատ անգամ: Հայ խմբագրների մխիթարից հետ ունեցած դատերը մեզ յայտնի են Տաճկաստանում 8 հատ:

Հայոց 132 հանդէսներից առաջինը Թիֆլիսի ամսագիրը „Կռունկը“ եղաւ, որ վճարում էր յօդուածների համար 8, 10 և 12 րուբլի: Այնուհետև բացի „Փորձը“ տակաւին չատ նրանք հանդէս, որ վճարէր ոչ մշտական աշխատակիցներին:

Մինչև այսօր ոչ մի հայ լրագիր չէ ունեցած այնքան յայտարարութիւններ, որ գոյա վճարքով բաւականին օգնութիւն ստանար: Բնականապէս հանդէսների բոլոր մուտքը բաժանորդագրութիւնից է: Մինչև եօթանասնական թուականները և ոչ մի հանդէս ունէինք, որ մինչև հազար տարածուող ունենար, այլ սովորաբար 250 մինչև 600: Վերջին եօթանասնական թուականներում էջմիածնի Արարատը ունեցաւ մօտ 2,000-ից մինչև 3,000 տարածուող և այն գրեթէ բոլորապէս Ռուսաստանի քահանաներից բաղկացած: Միւս հանդէսները սովորաբար ունեցել են և ունին 300-ից մինչև 1,000 կամ 1,300 բաժանորդ: Հայ լրագրների նպաստները և ապա սպառնալիքները չը վճարող բաժանորդներին՝ ընդհանուր է թէ Ռուսաստանում և թէ Տաճկաստանում:

Ներկայ տարին բոլոր հայ պարբերական հրատարակութեանց թիւը հասնում է 20-ին: Եթէ ենթադրենք դարա

ամեն մեկի բաժանորդների թիւը մէջին հաշուով մօտ 600-ի, այն ժամանակ պարբերական հրատարակութեանց ստացողների թիւը կհասնի 12,000-ի: Ենթադրելով ընդհանուր հայոց թիւը 4 միլիոն, երկու հարիւր հազար հոգուն ընկնում է մի հանդէս և ամեն 333 հոգուց մեկը հանդիսի բաժանորդ է: Ռուսաստանի մէջ հանդիսների թիւը այժմ է 7, հայոց թիւը մօտ մեկ միլիոն, որ ասել է թէ 142, 857 հոգուն ընկնում է մեկ հրատարակութիւն և 23 հոգուց մեկը լրագրի բաժանորդ է: Եւրոպական տէրութեանց մէջ՝ Զուիցերիայում մօտ 6,500 հոգուն ընկնում է մեկ հանդէս, Ֆրանսիայում մօտ 15,000 հոգուն, Անգլիայում մօտ 20 հազար հոգուն, Ռուսաստանում (ընդամէնը 427 հանդէս) մօտ 196,000 հոգուն, Տաճկաստանում ընդհանրապէս մօտ 880,000 հոգուն մի հանդէս:

Ա. Երիցեանց

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս յուլիսի 15-ին.

Մեր հասարակութեան անտարբերութիւնից և մասամբ պարզամիտների մեծամասնութիւնից օգուտ քաղելով մեր հոգեպէս և բարոյապէս մաշուած շրջմոլիկները կարծում են, որ կարող են իրանց ոճիրաստական դատողութիւնները հասկացող ուղեղի տեղ ծախել հասարակութեան վերայ և իրանց անբարոյական և ողորմելի լոգիկայով դանել պատիւ հասարակութեան առաջ այն ակռաւէ նման, որ դոյնգոյն թղթոյտների վերայ նկարելով սերամարգ է ուզում ցոյց տալ իրան մեմիտների առաջ:—Բայց Թող լաւ հասկանան այդ խեղկատակները, որ հասարակութեան խոհեմ և հասկացող մասը դիտէ ժամանակով որոշել դրական հացկատակներին, որոնք երկար տարիներով բուլվարների վերայ անգործ Թափառելուց յետոյ ամէն կանոնաւոր տպագրութիւն պահանջող պարապմունքից փախչելուց յետոյ լրագրութիւնը ապրուստի մէջոց են շինել վերջապէս և իրանց կրքերը և չահերը յագեցնելու համար պատրաստ են արատ գցել ամեն մի բարեխիղճ անձի, ամեն մի օրինաւոր հիմնարկութեան վերայ: Այս կարգի սոփեռաններին է պատկանում և պ. Ս. Ս. որ „Մեղուի“ 72 համարում գ ա կ ա ղ ի համաձայն „Հալաբարի Ս. Մարիամեան օր. դպրոցը“ վերնագրով յօդուածում իրան յատուկ շինծու ձևով սրտացաւ է ուզում ձևանալ դպրոցի համար, բայց իսկապէս այս ճանապարհով է ուզում դրսեւել իր անձնական հաշիւները մի անձի հետ, որը չհամեցաւ ակռաներին սերամարգի տեղ քարոզել հասարակութեանը:—

Պարոնը այդ յօդուածով ճգնում է ցոյց տալ որքան կարելի է դպրոցը ամենավատ դրութեան մէջ, մոլորեցնում է միամիտ ընթերցողներին իր յատուկ ձևով ասելով թէ դպրոցը 2 հազար (?!!) րուբլի պարտք ունի, որ վարչութիւն հիմնվելու օրից ենտրեգանները կան մէջը և ի վերջոյ պատգամ է կարդում (էն էլ ով) թեմ. տեսչի գլխին որ նա վեր կենայ, գործ չինի... քանի որ դպրոցը ընկնում է (!), փակվելու վերայ է (!!):

Աղտարութիւնը վերականգնելու համար խնդրում ենք տպել ձեր պատուական օրագրի մէջ այն երկտող դրուագը:—Հալաբարու ո. Մարիամեան դպրոցը երբ հիմնվելու օրից չէ ունեցել ոչ մի հատատ եկամուտ, ոչ մի դրամագլուխ, ոչ մի կալուած. մինչև 1877 թուականը դպրոցը կառավարվում էր մի ա ն ձ ո վ, որ նուիրական մէջոցները չլինելու պատճառաւ 3 թէ 4 տարի կառավարելուց յետոյ ստիպուած էր թողնել դպրոցը. այն օրից նախկին թեմ. տեսուչ պ. Յակ. Տէր-Յովհաննիսեանի և հանգուցեալ Այվազեանի խորհրդով կազմվեցաւ վարչութիւն, որը իւր անդամների ընդհանուր ժողով պէտք է հոգար դպրոցի նուիրական և ստուարական մասի վերայ աջակցութեամբ թեմ. տեսչների:—Այդ թուից մինչև այսօր վարչութիւնը իւր ջանքերով կարողացաւ այն աստիճանի վերայ կանգնացնել դպրոցը, որ այժմ օրինակելի դպրոց է համարվում իւր նմանների մէջ ոչ միայն բազմաթիւ այցելուների, այլ և նոյն իսկ թեմ. տեսուչների անկեղծ խոստովանութեամբ և վկայութեամբ: Դպրոցը որ մինչև 1877 թուականը, այսինքն մինչև վարչութիւն կազմվելը բաղկացած էր մի դասարանից 38 աշակերտուհիներով և տարեկան 300—400 րուբլի եկամուտով, այժմ վարչութեան չնորհիւ փոխվել է երեք դասարանի, իւրաքանչիւրը առանձին բաժանմունքով, տարեկան մինչև 1,400 րուբլի եկամուտով և կառավարում է իւրաքանչիւրը տարի կանոնաւոր հրապարակական քննութիւնները և հաշուետուութեան հանդէսը: Այս բաները շատ լաւ յայտնի են հասարակութեանը և թեմ. տեսուչներին, որոնք հրապարակաւ կվկայեն դպրոցի ծառայողների անտրանելի ծառայութիւնները, որոնք չնչին նուիրական վաճառութեամբ ամիսներով մնալով անուճկի քրտինք են Թափել որքան կարելի է պահպանել դպրոցի գոյութիւնը և բարեկարգել նորան: Ներկայումս դպրոցը ունի մի 300-ի չափ պարտք, որը չառաջացել է ա պ ա ռ ե ն ե ր ը չտանալուց, իսկ պ. Ս. Ս. կույր աչքում 300 րուբլին փոխվել է 2 հազարի:—Բացի սորանից դպրոցը առաջնակարգ տարին մտադիր է քանալ դպրոցին կից „Մ ա ն կ ա կ ա ն պ ա ր տ է զ“, ի նկատի ունենալով ծնողների պահանջը: Թող հանգիստ կենայ պ. Ս. Ս.-ն՝ դպրոցը իւր տանն և մեկ տարուայ գոյութեան ընթացքում շատ չար ու բարիք է տեսել. նա ոչ երբ մի չինչին 300 րուբլի պարտք է ունեցել, այլ դորանից աւելի մեծ կրիտիկական դրութեան մէջ է եղել, սակայն նա չէ ընկել և չէ փակվել, այլ ընկել է միայն նորա չարաչճի և անարգ դատճաննների պատիւը:—

Հալաբարը շատ բազատաւոր կլինէր, եթէ նորա վեց եկեղեցւոյ ծխականները ոչ երբ մի և բ ե ք դ ա ս ա ր ա ն ա ւ ո ր դպրոց, որպիսին է „Մարիամեանը“ այլ գէթ հոգայինն մի դասարանաւոր դպրոց ունենալ իրանց գաւառում՝ հազարաւոր որը և անտէր մանուկներին քաշաներում Թափառելուց փրկելու և երջանկացնելու:—Բայց այս րոպէիս ինչ հալի մէջ են Հալաբարի վեց ծուխի միւս դպրոցները: Ս. Կարապետի դպրոցը մինչև այսօր տեղաւորված է մի մութը, խոնաւ և նեղ սենեակում և կառավարվում է նոյն եկեղեցւոյ տիրացուի ձեռքով և հարկէ ադամական սիստեմայով. Խոջիվանքի և ս. Լուսաւորչի ծխականները չհոգացին մինչև այսօր մի մի դպրոց պահել իրանց գաւառում, ինչպէս որ այդ թեմ. տեսչի հարցաքննութեան ցուցակից (լրագրներում) երևում է. Զորաբաշի ս. Գէորգայ եկեղեցւոյ դպրոցը 1½ ամիս է, ինչ որ փակվեցաւ, մնանալով Շամքոռեցւոց եկեղեցւոյ դպրոցի հետ, որը (վերջինը) մինչև այդ օրը նոյնպէս կառավարվում էր տիրացուների ձեռքով, տարեկան 70—80 րուբլի եկամուտով, այնպէս որ այժմ Զորաբաշու ծխականները իրանց ահուելով այլևս դպրոց չունեն, և մէջոց

չտուին դպրոցի աշխատասէր ուսուցչին շարունակելու պահպանել այդ դպրոցը, որոնց մէջ այնքան մեծ կարօտութիւն ունի հայաշատ Հալէպաբերը. վերջապէս ս. Մինասի „Դաստիէզ Իզմիրեան“ դպրոցը, որ ապահով է համարվում, նոյնպէս շատ մի նախանձելի վիճակի մէջ չէ, քանի որ նորա բնակարանը մի մութը, ապակիները կոտրտած, խոնաւ և անմաքուր սենեակ է: Վերոյիշեալ դպրոցները մի մի դասարանի են կազմված. իսկ նորա ծախսանները մինչև այժմ չհոգացին բարեկարգել և պահպանել երանց դպրոցները և այժմ հազարաւոր ուսումնածարաւ մանուկներ թափառում են փողոցներում անտէր, անտիրական: Թող մեր ազգասէրները այս չարիքի առաջը առնեն, եթէ ուղղ ոգեւորած են ազգային լուսաւորութեան և դաստիարակութեան զգացմունքով, իսկ մենք թողնելով այդ կնդիրները ուրիշ ժամանակի, առ ժամանակ փակում ենք մեր նամակը յիշելով Կռիլովի խօսքերը „Տէր Աստուած, Դու փրկիր՝ կոշտ ու տգէտ դատաւորից“:

Կ. Թ.

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԿԱՐԱՀԱՆԴԷՍ

Յայտ է Թէ, Բրիտանական դեսպան Վ.սեմ. Լօրտ Տըֆըրինի նախագահութեանը տակ, Բէրայի փոքր Հանրայինն պարտէզին մէջ բացուած է մի նկարահանդէս, որ պիտի տևէ մինչև մայիսի վերջը: Ուզելով տեսնել Թէ Հայ արուեստն ինչ դիրք բռնած է անդ, այցելեցի այդ նկարահանդէս, և ահա քննութեանս արդիւնքն:

Թէև, ըստ ցուցակին, 209 գործեր պիտի երևէին նկարահանդէսին մէջ, սակայն 2 նկարներ վերցուած են պետական արգելքով, որպէս պատմած է Մասիս, և 10 նկարներ բացակայ են զանազան պատճառներով: Ատոնց մէջ էին Պ. Նշանեանի Թուրէ էջմիէնցին, որ մեծամեծ գովեստներու արժանացած է տեղական Եւրոպական մամուլի կողմէն, Պ. Տիրացուի, Պ Աղաբէգեանի մեկան և Պ. Մելքիսեդեկի երկու նկարներն: Ուստի տեսայ 197 գործեր, այդ մէջ Հայ գեղարուեստն կը ներկայանայ հետևեալ կերպով:

Պ. Նուանդ Ոսկան, մեր մեծագոյն արձանագործ, ունի երկու ձեռակերտներ, իւր սովորական Հարտարութեամբ և Հմտութեամբ շինուած.մին կը ներկայացնէ Լուի ԺԴի օրով երկու Ֆրանսայի ազնուականներու մենամարտն, իրենց դարի հագուստներովն, սուսերամերկ և խրոխտ. միւսն կը ներկայացունէ մի օթալը (աղախին), արևելեան ոսկեճամուկ զգեստով, ոսկեայ գդակով, կրելով մանեակ, օղեր և ապարանջաններ և նստած մի սատափեայ բազմոցի վրայ. աղախինն, որ ունի մերկ ոտքեր, բազուկներ և կուրծք, կ'ածէ քնար և կ'երգէ մի լիուրք եղանակ. զի իւր դէմքի մելամազձոտ արտայայտութիւնն այսպէս ենթադրել կը տայ, չնորհիւ հեղինակի հմայալի տաղանդին:

Ս. Երանեկ Տատեան նկարած է մի դեռահաս աղջիկ, խարտեաշ, կապուտակին, բուստի պէս նուրբ:

Ս. Տիրուհի Կիւմիւշեան մեծ աջողութեամբ օրինակած է մի արձանական խումբ, որը նիւթն է դիցաբանական:

Պ. Աճէմեան նկարած է մի երիտասարդ մայր որ կը գուրգուրայ իւր երեխայի վրայ. գեղանի պատկեր:

Պ. Իւթիւճեան աջողութեամբ օրինակած է Վօլդեռի կիսաբաձանն, մեծանուն իմաստասէրի հեգնաժպիտ դէմքովն:

Պ. Լէքէճեան կը ներկայացունէ Զէյպէքներու պարն: Այը և կին կը պարեն, այդն խածած իւր դաշոյն. երկու սեռէ նուագածուները կ'ոգևորեն պարն: Պատկերն ունի բնականութիւն և մեծ կենդանութիւն:

Պ. Կէօչէ-Օղլու նկարած է մի հին և կորովի չէնք, կամարներով, սիւներով և սանդուղներով: Յաւալէ է որ ժամանակ չէ գտած աւարտել իւր ընտիր գործ:

Պ. Ձիվանեան ունի չորս նկարներ: Մին կը ներկայացունէ Լօրտ Պայրընի երազն. անուանի քերթողը կ'երևի երազուն, և իւր շուրջ կը նշմարուին շքեղ բնութիւն, արեւելեան կարաւանները և Ցունատանի աւերակներն: Միւսն կը պատկերէ գարունն, իւր մեղմ ծովով և Թարմ երկինով, իւր ակնապարար պուրակներով և ծաղկալից ծառերով: Երրորդն կը ներկայացունէ առաւօտ ծովի վրայ, ուր մի նաւակ կը տարայ. երկին և ջուր սքօղուած են մի խորհրդաւոր մշուշով, Թեթևակի: Վերջինն կը պատկերէ Հրեհ Սատամպոլի մէջ, գիշերային մուքովն ահաւոր:

Պ. Մուրատեան ունի երեք նկարներ: Մին է օրինակութիւնն Գանօվայի դիցուհւոյն: Միւսն կը ներկայացունէ մի հայ ծերունի, հին տիպով և ազդեցիկ խորշոմներով: Երրորդն կը պատկերէ մի Հայ հացագործ, հաւանօրէն Ակնեցի. որ իւր նկանակներու քով նստած, հանդարտ կը ծխէ իւր կկլպակ. հին ազգային տիպ, որ ունի յատուկ կարևորութիւն:

Պ. Յովհաննէս Սագըզեան օրինակած է մի գարնային պատկեր, ուր պատանի և պատանուհի կ'օրուին սիրավառ: Նրբամասն աշխատանք լի ճաշակով և հաւատարմութեամբ:

Պ. Զէրայի ուրուագրած է փեսաղամանէի մի տեսիլն, յոյժ բանաստեղծական: Սիրուն ծառեր վճիտ վտակին վրայ, հիանալի նրբութեամբ նկարուած: Ահա մի տաղանդ, այնքան համեստ որքան ճշմարիտ:

Պ. Զօպանեան ունի վեց նկարներ, այդ երեքն իրօք հիանալի: Ատոնց առաջինն է մի նրբադէմ օրիորդ, սիրուն, հերարձակ, կապոյտ զգեստով և կարմիր վզնոցով: Երկրորդն է մի ալէհեր ծերունի, արտայայտութեամբ լի աչքերով իւր խորշոմած ճակատի տակ: Երրորդն է մի շառագոյն գդակով մի Իտալուհի, Թուխ, գէր, կարմիր, կորովի բացատրութեամբ: Չորրորդն է օրինակութիւն Դիէգօլօի Ս. Անտօնին, ազնիւ աշխատանք: Միւս երկու նկարներն, որք կը ներկայացունեն մի Թխակարմիր Հայ երիտասարդ և մի գժնէհայեաց ծերունի, այնքան վար կը մնան նախորդ գործերէն որ կարծես մի տարբեր վրձին արտադրած է զանոնք:

Պ. Պաւղոս Շաշեան նկարած է երեք տարբեր տարօրներ իրենց տերեւներով: Թէ և պատկերի յատակէն իւր մերձութեամբ կը յիշեցունէ հեղինակի աշխարհահռչակ, որպէս գրած եմ երբեմն, տարօրներն բնական դոյներով ներկայացուած են և հրապուրիչ:

Պ. Վ.իչէն Արշան նկարած է մի մերկիրան Արաբ որ կը ծխէ կկլպակ: Քաջարուեստ պատանին է աշակերտ Պ. Վալէռիի, այդ մի փառաւոր պատկերն որ կը ներկայացունէ իւր կին (գեղեցիկ Հայուհի), այս նկարահանդէսի նշանաւորագոյն գործերէն մին է:

Վերջապէս խօսինք Պ. Պետրոս Սրապեանի վրայ, որ ունի երկու հրաշակերտներ: Առաջինն կը ներկայացունէ երկու Հրեայ հնածախներ, այդ մին կը ցուցնէ միւսին մի մէծ հատ երբայական ընտիր տիպեր, հզօր և գրկթէ խօսուն արտայայտութեամբ: Երկրորդն կը պատկերէ Վանեցի հայ մուրացիկ իւր գունեղ կապերտներով և Թխակապոյտ գլխանոցով, որ գաւաղանին յենած կը նայի ողորմ աչքերով: Այս նկարն արտայայտութիւն է յոյժ սրտառուչ. հեղինակի զգայուն վրձինն

աջողած է անձնաւորել մեր դատառացի եղբայրներու պան-
դխտութիւնն և Հարստահարութիւնն: Տեսայ օտարները որք
ներթեցան այս երեւոյթի առջեւ, և մեզի քնական չէր որ
աջտասուէի, ես որ չեմ արուեստագէտ, այլ պարզապէս
ԱԶԳԱՍԷՐ:

(Մասխ).

ՆԱՄԱԿ ՍՐԴՈՒԻՆԻՑ

7 Յուլիսի 1882

Տեսնելով, որ խանութիս մէջ հաւաքուած երիտասար-
դները իրանց ժամանակը անց են կացնում շատ անգամ ան-
տեղի խօսակցութիւններով և խաղերով, ես մտադիր եղայ
օգուտ քաղել այդ հաւաքումէն և պարապեցնել զեզի
գրականութեամբ: Այս նպատակի համար ես առաջարկեցի
Հանգանակութիւն, որոյ մասնակցեցան առ այժմ հետեւեալ ե-
բիտասարդները, իւրաքանչիւրը մի մի րուբլի վճարելով. Յով-
սէփ Սրապեանեան, Գաբրիէլ Բաբոեան, Գասպար Քալփակճեան
Գաւիթ Գաւիթեան, որոյ վերայ աւելացրի եմ կողմէս եմ
րուբլի: Այս հինգ րուբլին ուղարկելով խմբագրութեանդ,
խնդրում եմ ուղարկել մի օրինակ տարուայ սկզբից „Արձագանք“
և հրատարակել զայս լրագրիդ մերձակայ թերթի մէջ:

Ուրախութեամբ յայտնում եմ թէ մեր Հանգանակու-
թիւնը հետզհետէ մեծանում է, որը կը գործածենք օգտա-
կար հրատարակութիւնները բերել տալով:

Սոփրէլ Յովհաննէս Մխիթարեան:

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ԱՌԱՋԻԿԱՅ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՑ ՀԱՄԱՐ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՅԵՐԷՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ.

		Ռ.	կ.
1.	Ժողովրդական այբբենարան.	—	5
2.	Տէր-Ղեւոնդեան Մայր. լեզու ա. տ.	—	35
3.	» » » » բ. տ.	—	40
4.	» » » գ. և դ. տ.	—	70
5.	Աղայեանց Ուսումն Մայրենի լեզուի.	—	20
6.	Ս. Մանդինեան Ազգային Ընտ. աշխարհ:	—	25
7.	» » Ազգ. Դիւցազ. աշխարհ.	—	30
8.	» » Նահապ. և Հայր. աշխ.	—	65
9.	» » Բացատր. Ընտ. աշխարհի	—	75
10.	» » Հենչելի թուաբ. խնդիրներ մ. ա.	—	40
11.	» » Կեանքի Հանդ. Համ. թուաբան.	—	75
12.	» » Համ. Մանկավարժութիւն	1	50
13.	Կոստանեան Ծաղկաքաղ ըրչան Ա.	—	25
14.	» » Ծաղկաքաղ ըրչան Բ.	—	60
15.	» » Ծաղկաքաղ ըրչան Գ.	—	40
16.	» » Գրաբարի Հոլովումը.	—	15
17.	» » Գրաբարի խոնարհումը	—	25
18.	Եղիշէ ըստ անձնացեայ օրինակի	1	—
19.	Նոյն միջակ թղթի վերայ	—	80
20.	Այվազեան Նախակրթանք ա. մ.	—	40
21.	» » Նախակրթանք մ. բ.	—	45
22.	» » Նախակրթանք մ. գ.	—	50
23.	Տէր-Սարգսեան գեղագրութեան օրինակներ	—	20
24.	Նազարեանց Հայոց լեզուի ուսուցիչ III տար	—	40
25.	» » Հայոց լեզուի ուսուցիչ չոր. տար.	—	60
26.	Բահաթրեան Համառօտ Հոգեբանութիւն	1	—
27.	Ա. Բագրատունի Տարերք քերականութեան.	1	25
28.	Տէր-Գաւթեան русск. слово. Դասագիրք ռուսաց լեզուի.	—	45
29.	Նազարեանց, Առաջնորդ ռուսաց լեզուի.	1	50
30.	Տէր-Աբրահամեանց Բանալիք Ռուս. լ.	—	50
31.	Տէր-Ստեփանեան Սկզբունք քր. հաւ.	—	50
32.	Հայոց Սրբազան պատմութիւն Հին Կտակարանի	—	50
33.	» Սրբազան պատմութ. Նոր կտակ.	—	50
34.	Մուրատեան եկեղեցական պատմութ.	2	—
35.	Գնունի Եկեղեցական պատմութիւն	1	20
36	Օրբելի Նախաշաւիղ կրօնագիտութեան մ. ա.	—	30
37	» Նախաշաւիղ կրօնագիտութեան մ. բ.	—	50
38	» Հին և Նոր Կտակարանի Պատմութիւն.	—	30
39	» Եկեղեցական Պատմութիւն	1	—
40	Մսերեան Հաւատապատում	—	25
41	» Հրահանգ Քրիստոնէական Հաւատոյ	—	75
42	» Քրիստոսապատում	—	50
43	Վարձելեան դասագիրք թուաբանութեան	—	70
44	Շահվերդեան նկատողական ուսում	—	50
45	Տէր Աբրահամեան Հայոց Պատմութ. պատկեր.	1	—
46	Աբովեանց պատմ. Հայոց	—	60
47	Բաղդադեան Աշխարհագրութիւն	1	—
48	Տէր Յակովբեանց Աշխարհագ. Հայաստանի	—	60
49	» Հայաստանի Քարտէզ	—	25
50	Սիմէօնեան ընդհանուր Աշխարհագրութիւն. դասագիրք Հայոց դպրոցների համար Մ. Առաջին նախագիտելիք հինգ պատկերով	—	35
51	մ. բ. Քաղաքական Աշխարհագրութիւն	—	60
52	Հայաստանի Քարտէզ ընդարձակ	2	—
53	Բժշկ. Տիգրանեանց Մարդակազմութիւն (Անատոմիայ)	—	50
54	Պալասանեան գրականութիւն.	—	50
55	Զարբհանալեան Պատմութ. Հայ, դպրութ. 2 հատ.	4	—

ԱՌԱՋԻԿԱՅ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵԼՈՒ Է ԹԻՓԼԻՍՈՒՄ ՄԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

„ՎԱՐԺԱՐԱՆ“

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ

ա. Ազգիս վերհասած հայրապետի և թեմական վերատեսուչների կարգադրութիւնները ազգային ուսումնարանաց վերաբերութեամբ:

բ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածներ մանկավարժական բովանդակութեամբ:

գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ—յօդուածներ ազգային պատմութեան, աշխարհագրութեան, դրականութեան, տնհմագրութեան և լեզուի վերաբերութեամբ:

դ. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—քննական յօդուածներ դասագրքերի և մանկական ընթերցանութեան գրքերի:

ե. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ—զանազան տեղեկութիւններ ուսումնարանական կեանքից:

զ. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ—վէպեր, զրոյցներ և այլն մանկանց ընթերցանութեան համար:

է. Հանելուկներ, խնդիրներ և խաղեր մանկանց համար:

ը. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մեր ամսագրին խոստացել են գործակցել ազգային ուսումնարանների մէջ գործող յայտնի անձինք, որոնք ծանօթ են հայ հասարակութեանը իրանց աշխատութիւններով մանկավարժական ասպարիզում:

„Վարժարանը“ կը հրատարակուի ամիսը մի անգամ, բացի յունիս և յուլիս ամիսներից. ետրաքանչիւր համարը բաղկացած կը լինի չորս տպագրական թերթից in 8°:

Առաջին համարը լոյս կը տեսնի օգոստոսի 15-ին:

„Վարժարանի“ տարեկան գինն է թէ Թիֆլիսում և թէ այլ քաղաքներում ՀԻՆԳ րուբլի:

Ստորագրուել կարելի է Թիֆլիսում խմբագրութեան գրասենեակում (Սադովայա փողոց, տուն Մարգարեանի) և պ. Եփրեմ Ծատուրեանի մօտ (Դվօրցովայա փողոց): Իսկ օտարաքաղաքացիք դիմելու են խմբագրութեան հետևեալ հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію педагогическаго журнала „Варжаранъ“. Tiflis Rédaction du journal pedagogique «Varjaran.»

Խմբագիր-հրատարակող Նիկողայոս ԽՈՍՐՈՎԵԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ

առաջիկայ աշխատութիւնքը.

	ր.	կ.
1) Шараканы. (Շարականի լիակատար թարգմ.)	3	—
2) Мойсей Хоренскій. (Պատմութիւնը – մեկնութեամբք և ծանօթութեամբք)	3	—
3) Варданъ Великій. (Վարդան պատմիչ մեկնութեամբ և ծանօթ.)	3	—
4) Степаносъ Таронскій. (Ասողիկի պատմ. մեկնութեամբ և ծանօթ.)	3	—
5) Мойсей Хоренскій и древній Эпосъ армянс.	1	—
6) Очеркъ религій языческихъ армянъ. (Հայոց հեթանոսական կրօնը.	1	—
7) Очеркъ Исторій армянской церкви. . . .	—	50
8) Վարդան պատմիչ (Հայերէն բնագիրը) . .	2	—
9) Մովսէս Կաղանկատուացի. » » . .	2	—
10) Սիւնեաց պատմութիւնը (Ստեփաննոս եպիս.)	2	—

Բագուայ Մարդասիրական ընկերութեան խորհուրդը իւր երկսեռ դպրոցներում դաստիարութեան համար գալ ուսումնական տարուայ սկզբից հրաւիրում է. երկու ուսուցիչներ տարրական ուսման մայրենի լեզուով, իւրաքանչիւրին 600 րուբլի և սենեակ դպրոցում: Նոյնպէս երկու ուսուցչուհիներ, մէկին-500 րուբլի, միւսին 450 րուբլի և սենեակ դպրոցում: Երկու առաջին դասատներում տղայոց և օրիորդաց հայոց լեզուի, հայոց և ռուսաց վայելչագրութեան ուսուցիչ—600 րուբլի: Օրիորդաց առաջին դասատնը ռուսաց լեզուի, թուաբանութեան և աշխարհագրութեան ուսուցչուհի—600 րուբլի: Տեսուչ—ուսուցիչ տղայոց դասատնը ռուսաց լեզուի, թուաբանութեան և աշխարհագրութեան—1200 րուբլի:

Մանրամասն պայմանները կարելի է իմանալ գրաւոր կերպիւ խորհրդից, որին թող բարեհաճեն դիմել ցանկացողները այսպէս. Баку. совѣтъ Армянскаго Человѣколюбиваго Общества, *յայտնելով նոյնպէս իրանց պայմանները և հասցէն:*

„ԱՐՁԱԳԱՆՔ“

Ներկայ 1882 Թուականի փետրվարի 21-ից կառավարութեան Թոյլտվութեամբ հրատարակվում է գրական և քաղաքական շաբաթաթերթ „ԱՐՁԱԳԱՆՔ“ անունով:

„ԱՐՁԱԳԱՆՔԸ“ դուրս է գալիս կիրակի օրերը երկու Թերթի մեծութեամբ:

„ԱՐՁԱԳԱՆՔԻ“ ներկայ տարուայ բաժանորդագինը՝ տարուայ սկզբից չհրատարակուելու պատճառով, Հինգ ռուբլի է:

„ՓՈՐՁԻ“ այն բաժանորդները, որոնք երանց բաժանորդագինը վճարած ունէին անցած 1881 Թուականի երկրորդ կէսի համար, 1882 Թուականի ընթացքում „ՓՈՐՁԻ“ փոխանակ „ԱՐՁԱԳԱՆՔ“ կ՚ստանան, եթէ միայն բարեհաճէն անխօսքէն յայտնել խմբագրութեան երանց ցանկութիւնը և հասցէները:

„ԱՐՁԱԳԱՆՔԸ“ կը հրատարակուի հետևեալ պրոգրամմայով.—

I. Տեղեկութիւններ կառավարութեան գործողութիւնների և օրէնսդրական միջոցների մասին:
II. Առաջնորդող յօդուածներ ազգային և հասարակական կեանքի նշանաւոր հարցերի վերաբերութեամբ:
III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից. ընդհանուր տեսութիւն հայ և օտար լրագրների տեղեկութիւնների և կարծիքների:
V. Տնտեսական և առևտրական հարցեր փոխադրքայութեան մէջ:
V. Յօդուածներ ազգային կրթութեան վերաբերութեամբ:
VI. Արտաքին տեսութիւն. յօդուածներ և տեղեկութիւններ արտաքին հասարակական և քաղաքական նշանաւոր անցքերի մասին:
VII. Կրիտիկա և մատենախօսութիւն:
VIII. Ֆելիետօն:
IX. Խառն լուրեր:
X. Յայտարարութիւններ:

Ստորագրուիլ ցանկացողները կարող են դիմել Կենտրոնական Գրավաճառանոց, Գօլովինսկի պրօսպեկտ, Մեծնամանեանի տանը, ուր վերեղուած է և խմբագրութիւնը:

„ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ“ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Լոյս տեսան Հայոց Սբբազան պատմութեան երկու ձեռնարկները.

Ա. Պատմութիւն Հին-Կտակարանի, բաղկացած 30 քառածալ Թերթերից, 240 մեծագիր երեսներից և 7 հատ գեղեցիկ պատկերներով զարդարուած:

Բ. Պատմութիւն Նոր-Կտակարանի՝ 208 մեծագիր երեսներից և զարդարուած 17 գեղեցիկ պատկերներով:

Դասագրքերը քննուած են Բարձրագոյն Հոգևոր վարչութեան ձեռքով և տպագրուած են ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հաճութեամբ և հրամանով:

Իւրաքանչիւրի գինն է 50 կ.

Դրամարով գնողները քանակութեան համեմատ վիճակ են ստանում:

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը, հրաւիրելով ցանկացողներին յանձն առնել ջրանցքի կառուցումը Թիֆլիսում, յայտնում է ընդհանուր գիտութեանը որ առաջարկութիւնների ընդունելութիւնը կը շարունակուի Քաղաքային Վարչութեան մէջ մինչև $^1/_{13}$ սեպտեմբեր ամսի ներկայ 1882 Թուի.

Պրօեկտի, նախահաշիւի և սկզբնական պայմանների հետ կարելի է ծանօթանալ՝

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Թիֆլիսի, Ս. Պետերբուրգի, Մոսկվայի և Օդէսսայի քաղաքային Վարչութիւնների մէջ, նոյնպէս և Վարշավա քաղաքի նախագահի կանցելիարիայում:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ.

Փարիզում «Ingenieur» լրագրի խմբագրութեան մէջ (Rue Fidelité, 9) Լօնդօնում «Ingineering լրագրի խմբագրութեան մէջ (35—36 Bedford Street, Strand, W. C.) Բրիւսելում. A la Direction du Commerce et des Consulats, au Departement des affaires Etrangères, Վիէննայում «Allgemeine Bauzeitung» լրագրի խմբագրութեան մէջ, (Waldheims Verlag, Taborstrasse, 52) և վերջապէս Բերլինում «Deútsche Bauzeitung» լրագրի խմբագրութեան մէջ (Bahnhofstrasse, 4, Berlin S. W.)

3—3

ԶԻԹԿ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՅՑ

Հաւաքեց Հ. Գ. ԻՕՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

Վենետիկ. 1881 Թ.

Գինն է 10 րուբլի.

Ձանապարհածախսով 10 ր. 60 կ.

ԾԱԽՎՈՒՄ Է „ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ“

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրաւիրում է ցանկացողներին յանձն առնել վերայի ԿԱՄՈՒՐՋԻ ՀՈԳԼԻ և ՔԱՐԻ շինութիւնները: Յայտարարութիւնները պէտք է ներկայացնել քաղաքային վարչութեան օգոստոսի 1-ից ոչ ուշ: Շինութեան նախագիծը և պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը:

3—3

Дозв. Ценз. Тифлисъ, 17 Іюля 1882 г.
Типографія И. Мартиросіанца.